



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS  
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԹԻՎ 153

ՀՈՒՆԻՍ 2012

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՀՈԴՎԱԾ 5

#### Հոդված 5 § 1 (գ)

##### Հանձնում

Նախքան հանձնումը կալանքից խուսափելու նպատակով Սան Մարինոյի օրենսդրությունում մատչելի, որոշակի և կանխատեսելի ընթացակարգի բացակայություն՝ *խախտումն առկա է*

*Toniolo v. San Marino and Italy - 44853/10*

### ՀՈԴՎԱԾ 5 § 3

#### Դատարան ներկայանալու երաշխիքներ

Որոշակի հանցանքների համար մեղադրվող անձանց գրավի դիմաց ազատ արձակման՝ օրենքով նախատեսված արգելքը՝ *խախտումն առկա է*

*Piruzyan v. Armenia - 33376/07*

### ՀՈԴՎԱԾ 6

#### Հոդված 6 § 1 (քրեական)

##### Դատարանի մատչելիություն

Անհնարինությունը ներպետական դատարանների համար սահմանել օրենքով նախատեսված վարչական տուգանքի չափը՝ *խախտումը բացակայում է*

*Segame SA v. France - 4837/06*

### Հոդված 6 § 2

#### Անմեղության կանխավարկած

Վաղեմության ժամկետները լրանալուց հետո մեղավոր ճանաչելը՝ *խախտումը բացակայում է*

*Constantin Florea v. Romania - 21534/05*

### ՀՈԴՎԱԾ 8

#### Պոզիտիվ պարտավորություններ

Անձնական կյանքը հարգելու իրավունք

Մերկ երեխանների գաղտնի նկարահանումները քրեականացնող հստակ սահմանված օրենսդրական դրույթի բացակայություն՝ *խախտումը բացակայում է*  
***E.S. v. Sweden - 5786/08***

#### **Անձնական կյանքը հարգելու իրավունք**

#### **Ընտանեկան կյանքը հարգելու իրավունք**

Սլովենիայի անկախությունից հետո մշտական բնակության իրավունք ունեցող անձանց ռեգիստրից հանված անձանց բնակության հարցի չկարգավորվածություն. *խախտումը բացակայում է*

***Kurić and Others v. Slovenia [GC] - 26828/06***

#### **Ընտանեկան կյանքը հարգելու իրավունք**

Երեխային Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների Հաագայի կոնվենցիայի հիման վրա դիմումատուին վերադարձնելիս գործին առնչվող բոլոր էական հանգամանքների խորը քննության բացակայություն. *գործը ներկայացվել է Մեծ պալատի քննությանը*

***X v. Latvia - 27853/09***

#### **Խղճի ազատությունը**

Զինվորական ծառայություն անցնելը մերժող համոզմունքներ ունենալու հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը սահմանող համապատասխան օրենսդրական համակարգի կամ ընթացակարգի բացակայությունը. *խախտումն առկա է*

***Savda v. Turkey - 42730/05***

#### **ՀՈԴՎԱԾ 10**

#### **Պոզիտիվ պարտավորություն**

**Տեղեկություններ տարածելու ազատություն** Լիցենզավորված հեռուստատեսային հեռարձակողին կապուղու հատկացման մերժում՝ *խախտումն առկա է*

***Centro Europa 7 S.r.l. and Di Stefano v. Italy [GC] - 38433/09***

#### **Արտահայտվելու ազատություն**

Պառլամենտի շենքից դուրս կեղտոտ լվացք կախելու համար անօրինական հավաքի մեղադրանքով դատապարտում՝ *խախտումն առկա է*

***Tatár and Fáber v. Hungary - 26005/08 and 26160/08***

Քրեակատարողական հիմնարկի ներսում **կալանավորի** հետ հարցազրույցի նկարահանման բացարձակ արգելք՝ *խախտումն առկա է*

***Schweizerische Radio- und Fernsehgesellschaft SRG v. Switzerland - 34124/06***

## **ՀՈԴՎԱԾ 11**

### **Հավաքների և միավորման ազատություն**

Իսլամիստական կազմակերպության գործունեության արգելում կազմակերպության կողմից բռնություն քարոզելու համար. դիմումը ճանաչվել է *անընդունելի*

***Hizb Ut-Tahrir and Others v. Germany (dec.) - 31098/08***

## **ՀՈԴՎԱԾ 13**

### **Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք**

Ոստիկանության կողմից վատ վերաբերմունքի հետևանքով կրած ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու անհնարինություն. *խախտումն առկա է*

***Poghosyan and Baghdasaryan v. Armenia - 22999/06***

## **ՀՈԴՎԱԾ 14**

### **Խտրականություն (Հոդված 8)**

Միասեռ զույգերի դեպքում երկրորդ ծնողի կողմից երեխայի որդեգրման անհնարինությունը. Պալատի կողմից գործի ընդդատությունը զիջվել է *Մեծ Պալատին X*

***and Others v. Austria - 19010/07***

## **ՀՈԴՎԱԾ 17**

### **Իրավունքների և ազատությունների չարաշահում**

Իսլամիստական կազմակերպության գործունեության արգելում կազմակերպության կողմից բռնություն քարոզելու համար. դիմումը ճանաչվել է *անընդունելի*

***Hizb Ut-Tahrir and Others v. Germany (dec.) - 31098/08***

## **ՀՈԴՎԱԾ 34**

### **Զոհ**

Անձի հետ անխզելիորեն կապված և 3-րդ հոդվածով նախատեսված իրավունքների անփոխանցելիությունը, եթե դատավարության ելքի հարցում բացակայում է բարոյական շահը, կամ առկա է այլ էական պատճառ. *դիմումը ճանաչվել է անընդունելի*

***Kaburov v. Bulgaria (dec.) - 9035/06***



## ՀՈԴՎԱԾ 35

### Հոդված 35-ի § 1

#### Ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառում

Իրավական պաշտպանության սահմանադրական միջոցը հասանելի է միայն իրավական պաշտպանության ոչ արդյունավետ միջոցների կիրառումից հետո. նախնական առարկությունը մերժվել է

*Ištván and Ištvánová v. Slovakia - 30189/07*

#### Վեցամսյա ժամկետ

Կոնվենցիոյով նախատեսված վեցամսյա ժամկետը լրանալու հարցը լուծելիս ոչ աշխատանքային օրը հաշվի առնելը՝ անկախ ներպետական օրենքում արտահայտված դիրքորոշումից. նախնական առարկությունը թույլատրվել է

*Sabri Güneş v. Turkey [GC] - 27396/06*

## ՀՈԴՎԱԾ 46

### Պիլոտային վճիռ

#### Ընդհանուր բնույթի միջոցառումներ

Պատասխանող Պետությունից պահանջվել է մշակել փոխհատուցման ծրագիր ռեգիստրից հանված անձանց համաչափ փոխհատուցումն ապահովելու նպատակով

*Kurić and Others v. Slovenia [GC] - 26828/06*

## ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՈԴՎԱԾ 1

### Գույքի օգտագործման վերահսկողություն

Բարոյական հիմքերով որսորդությանը հակադրվող հողի սեփականատիրոջ պարտականությունը որսորդություն հանդուրժել իր հողի վրա և միանալ որսորդական միավորմանը՝ խախտումն առկա է

*Herrmann v. Germany [GC] - 9300/07*

Հողի վարձակալության ուժով վարձակալի օրինական իրավունքը՝ պահանջելու վարձակալության երկարացում նախնական պայմաններով անորոշ ժամկետով՝ խախտումն առկա է

*Lindheim and Others v. Norway - 13221/08 and 2139/10*

## ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՈԴՎԱԾ 1

### Վերահսկողություն գույքի օգտագործման նկատմամբ

իր հողամասում որսորդությունն էթիկական նկատառումներով արգելող սեփականատիրոջ պարտավորությունը թույլատրել որսորդությունն իր հողամասի տարածքում և անդամագրվել որսորդական միավորմանը՝ *խախտումն առկա է*  
*Herrmann v. Germany [GC] - 9300/07*

Վարձակալների՝ օրենքով նախատեսված իրավունքը հողի վարձակալության շրջանակներում պահանջել վարձակալության ժամկետի երակարածգում անորոշ ժամկետով և նախկինում գործող պայմաններով՝ *խախտումն առկա է*  
*Lindheim and Others v. Norway - 13221/08 and 2139/10*

### **Թիվ 1 Արձանագրության Հոդված 3**

**Ժողովրդի կարծիքի ազատ արտահայտում**

**Օրենսդիր մարմնի ընտրությունը**

ԶԼՄ-ների կողմից խորհրդարանական ընտրությունների կողմնակալ լուսաբանման մասին պնդումը. *խախտումը առկա չէ*

*Communist Party of Russia and Others v. Russia - 29400/05*

### **ԹԻՎ 7 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՈԴՎԱԾ 3**

**Փոխհատուցում**

Դատական սխալի զոհի անկարողությունը պահանջել պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցում. *խախտումն առկա է*

*Poghosyan and Baghdasaryan v. Armenia - 22999/06*

### **ԳՈՐԾԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ՄԵԾ ՊԱԼԱՏԻՆ**

### **ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ԶԻՋՈՒՄԸ ՄԵԾ ՊԱԼԱՏԻՆ**

### **ԴԱՏԱՐԱՆԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Ընտրություններ**

**Դատարանի նախադեպային իրավունքի՝ HUDOC տվյալների բազայի նոր տարբերակը**

### **ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ**

**2012թ. դատավորների երկխոսությունը**

**Ընդունելիության չափանիշների գործնական ուղեցույց**



**Ձեռնարկ Եվրոպական իրավունքի ոչ խտրականության օրենքի վերաբերյալ.  
նախադեպային իրավունքի թարմացում**

## ՀՈԴՎԱԾ 5

### Հոդված 5 § 1 (գ)

#### Հանձնում

**Նախքան հանձնումը կալանքից խուսափելու նպատակով Սան Մարինոյի օրենսդրությունում մատչելի, որոշակի և կանխատեսելի ընթացակարգի բացակայությունը, խախտումն առկա է**

#### *Toniolo v. San Marino and Italy*

Գանգատ թիվ 44859/10

Վճիռ 26.6.2012 [Բաժանմունք III]

**Փաստերը:** 2009թ. օգոստոսին Իտալիայի կառավարությունը միջոցներ էր ձեռնարկում հասնելու Սան Մարինոյից դիմումատուի հանձնմանը՝ *inter alia* փողերի լվացման կասկածանքով: Դիմումատուն ձերբակալվեց և տեղափոխվեց կանխարգելիչ կալանքի վայր 1939թ, Իտալիայի և Սան Մարինոյի միջև կնքված Բարեկամության և լավ հարևանության վերաբերյալ երկկողմ կոնվենցիայի հիման վրա: Իտալիայի հյուպատոսարանը հետագայում տեղեկացրեց Սան Մարինոյի կառավարությանը, որ Իտալիան հետևելու է 1957թ. Արտահանձնման վերաբերյալ Եվրոպական կոնվենցիայում ամրագրված ընթացակարգին, որը Սան Մարինոն նույնպես վավերացրել է: Դիմումատուն վիճարկեց ձերբակալման որոշումը՝ պնդելով որ կանխարգելիչ կալանքի կիրառման համար 1939թ Կոնվենցիայով պահանջվող որևէ անհետաձգելի անհրաժեշտություն չկար: Վերաքննիչ

դատավորը մերժեց այդ բողոքը՝ գտնելով, որ 1957թ. Կոնվենցիան գերակայում է 1939 թ. Կոնվենցիայի նկատմամբ, համաձայն որի՝ հանձնման ընթացակարգը սկսվել էր: 2009թ. սեպտեմբերին դիմումատուն խնդրեց ազատ արձակել իրեն, քանի որ լրացել էր 1939թ. Կոնվենցիայով նախատեսված երեսնօրյա ժամկետը, սակայն դիմումատուի պահանջը կրկին մերժվեց այն հիմքով, որ 1957թ. Կոնվենցիան գերակայում է 1939թ. Կոնվենցիայի նկատմամբ: Դիմումատուի հանձնման մասին որոշումը կայացվեց 2009թ. սեպտեմբերին, և դիմումատուն հանձնվեց Իտալիային ու այնտեղ կալանավորվեց: 2010թ. փետրվարին դիմումատուն ազատ արձակվեց:

Հոդված 5 § 1 (գ)-ի ենթադրյալ խախտում

(ա) *Գանգալուն ըննդեմ Սան Մարինոյի:* Դիմումատուի կալանքը համարվում էր հանձնում իրականացնելու նպատակով կիրառված կալանք, ուստի սույն իրավական հարցը ենթակա է կարգավորման 5-րդ հոդվածի § 1 (գ) ենթակետով: Եվ 1939թ. և 1957թ. Կոնվենցիաները կիրառելի են հանձնման ընթացակարգի տարբեր փուլերում, առանց հստակ նշելու, թե որն է կիրառվել դիմումատուի գործով. այդ հարցը թողնված էր կառավարության հայեցողությանը և հետևաբար՝ ներպետական դատարաններն առաջին անգամ պետք է մեկնաբանեին սույն հարցը: Անորոշությունը, թե վերը նշված երկու Կոնվենցիաներից որն է կիրառելի, անհամոզիչ է դարձնում այն փաստը, որ իրավական համակարգը ապահովում էր օրենքի հստակ և կանխատեսելի կիրառումը: Ավելին, 1957թ. Կոնվենցիան, որի վրա հիմնվել է Կառավարությունը,

էքստրադիցայի ընթացակարգը կարգավորող կանոնների կապակցությամբ հետադարձ հղում է կատարում ներպետական իրավունքին և ինքնին չի նախատեսում ամբողջական ընթացակարգ, որը երաշխիքներ կսահմաներ ընդդեմ հանձնող երկրի կամայականությունների: Սան Մարինոյի օրենսդրությունը նման ընթացակարգ նույնպես չէր նախատեսում: Այսպիսով ներպետական օրենսդրությունը մինչ հանձնումը կալանքի կամայական կիրառման վտանգից խուսափելու համար չէր նախատեսում իր կիրառությամբ բավականաչափ մատչելի, որոշակի և կանխատեսելի ընթացակարգ: Հետևաբար, դիմումատուի կալանքը՝ որպես հանձնման մասին որոշման արդյունք, չէր համապատասխանում օրենքով նախատեսված ընթացակարգին:

*Եզրակացություն՝* խախտումն առկա է (միաձայն):

#### բ) Գանգաղ ընդդեմ Իտալիայի

(i) *Կալանքն Իտալիայում:* Քանի որ դիմումատուն բողոքել է իրեն Իտալիայի կառավարությանը հանձնելուց հետո իր նկատմամբ կիրառված կալանքի անօրինականության վերաբերյալ, Դատարանը նշեց, որ նրա կալանքը Իտալիայում հիմնված էր իտալական դատարանի որոշման վրա և նպատակ ուներ ներկայացնել նրան իրավասու օրինական մարմիններին իրավախախտում կատարելու հիմնավորված կասկածով (Հոդված 5 § 1 (գ)):

*Եզրակացություն.* գանգաղը ճանաչվել է անընդունելի (գանգաղը բացահայտ անհիմն է)

(ii) *Կալանքը Սան Մարինոյում:* Դատարանը կրկնեց, որ հանձնում հայցող պետության կողմից իր ներպետական օրենսդրության հիման վրա գործողության նախաձեռնումը և հանձնող երկրի կողմից իր պայմանագրային պարտավորությունների համաձայն այդ գործողությունն ավարտին հասցնելը կարող էր վերագրվել էքստրադիցիան հայցող պետությանը: Դրանից հետևում է, որ Իտալիան, որպես հանձնումը հայցող պետություն, Իտալիայի օրենսդրության շրջանակներում պարտավորված էր երաշխավորել ձերբակալման որոշման և հանձնման պահանջի օրինականությունը: Այնուամենայնիվ, սույն գործով ոչ իրավաչափ գործողությունները ծագել են ոչ թե Իտալիայի ներպետական իրավունքի պահանջներին չենթարկվելու հետևանքով, այլ այդ հարցի կարգավորման կապակցությամբ Սան Մարինոյի օրենսդրության որակի անբավարարության պատճառով: Հետևաբար Իտալիան չի կարող ենթարկվել պատասխանատվության:

*Եզրակացություն՝* գանգաղը ճանաչվել է անընդունելի (անահամապատասխան է *ratione materiae* սկզբունքին):

Հոդված 41: Վնասների առնչությամբ պահանջ չի ներկայացվել:

### ՀՈԴՎԱԾ 5 § 3

### *Piruzyan v. Armenia*

#### **Դատաքննության ներկայանալու երաշխիքներ**

**Որոշակի հանցանքների համար մեղադրվող անձանց՝ գրավի դիմաց ազատ արձակման՝ օրենքով նախատեսված արգելքը՝ խախտումն առկա է**

*Գանգադ թիվ 33376/07*

Վճիռ 26.6.2012 [Բաժանմունք III]

**Փաստերը:** Դիմումատուն ձերբակալվել է 2006թ. հոկտեմբերին և կալանավորվել է բանդիտիզմի մեղադրանքով: Հետագայում նրա կալանքը երկարացվել է մի քանի անգամ այն հիմքով, որ նա կարող էր խուսափել կամ խոչընդոտել քննությունը, և հետագա քննչական գործողությունները անհրաժեշտ էին ու վարույթը դեռ ընթացքի մեջ էր: Դիմումատուին նաև մերժել էին կալանավորումը գրավով փոխարինելու պահանջը այն հիմքով, որ նա մեղադրվում էր հանցանքի համար, որը ներպետական օրենսդրությամբ դասակարգվում էր որպես <ծանր հանցագործություն>, և այդպիսով քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածով բացառվում էր գրավի կիրառումը, որը կարող էր նշանակվել միայն այն անձանց նկատմամբ, ովքեր մեղադրվում էին <ոչ մեծ և միջին ծանրության> հանցագործությունների համար: Դիմումատուն ի վերջո ազատ է արձակվել 2007թ. դեկտեմբերին՝ նրա վրայից մեղադրանքները հանելուց հետո:

**Հոդված 5 § 3-ի ենթադրյալ խախտումը**

(ա) Դիմումատուին *գրավի դիմաց ազատ արձակելու անհնարինությունը:* Կասկածյալին ազատ արձակելու կամ կալանավորելու հարցը որոշելիս պետական մարմինները պարտավոր են քննարկել այլընտրանքային միջոցառումներ նրա՝ դատաքննությանը ներկայանալն ապահովելու համար: Դատարանը նախկինում հայտնաբերել է Կոնվենցիայի հոդված 5 § 3-ի խախտում մի շարք գործերի առնչությամբ, որտեղ ներպետական օրենսդրության ուժով գրավի կիրառման մասին դիմումն ավտոմատ մերժում է ստացել: Սույն գործում, դիմումատուի միջնորդությունները մերժվել են այն հիմքով, որ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի §1-ը բացառում է գրավի դիմաց անձի ազատումը որպես ծանր կամ առանձնապես ծանր դասակարգված հանցագործությունների համար: Դիմումատուի նկատմամբ գրավի կիրառման ավտոմատ մերժումը, նրա կալանքի կոնկրետ հանգամանքների նկատմամբ դատական վերահսկողության բացակայությունը չէր համապատասխանում 5-րդ հոդվածի § 3-ով ամրագրված երաշխիքներին:

*Եզրակացություն.* խախտումն առկա է (միաձայն)

**Շարունակական կալանքի պարճառները:** Դիմումատուին շարունակաբար կալանքի տակ պահելը հիմնավորելու համար ներպետական դատարանները առաջնահերթ հիմնվել են վերջինիս՝ քննությունից խուսափելու և դատաքննությունը խոչընդոտելու վտանգի վրա, ինչպես նաև այն փաստի վրա, որ գործի քննությունը դեռ ավարտված չէր և

սպասվում էր դատաքննություն: Երկրորդ հիմնավորման կապակցությամբ Վերջին կետի առնչությամբ Դատարանը նշեց, որ հետագա քննություն իրականացնելու ահրաժեշտությունը կամ այն փաստը, որ դատաքննությունը դեռևս ավարտված չէ, 5-րդ հոդվածի § 3-ի նպատակներից ելնելով, չեն մտնում նախքան դատաքննությունն անձի կալանավորումն արդարացնող հիմքերի մեջ: Դիմումատուի կողմից գործի քննությունից խուսափելու և դատաքննությունը խոչընդոտելու վտանգի կապակցությամբ դիրքորոշում արտահայտելիս ներպետական դատարանները սահմանափակվել են վերացական և կարծրատիպային ձևով այս հիմքերը իրենց որոշման մեջ կրկնելով՝ առանց նշելու, թե ինչու են իրենք այդ հիմքերը համարում ընդունելի: Ընդհանուր հղումը հանցանքի լուրջ բնույթին, որի կատարման մեջ դիմումատուն մեղադրվում էր, բավարար հիմնավորում համարվել չէր կարող: Հետևաբար, ներպետական դատարաններին չհաջողվեց ներկայացնել կալանքի կիրառումն արդարացնող <հիմնավոր և բավարար> պատճառներ:

*Եզրակացություն՝* խախտումն առկա է (միաձայն)

Դատարանը գտավ նաև, որ առկա է 3-րդ հոդվածի խախտում այն հիմնավորմամբ, որ դատական լսումների ժամանակ դիմումատուն գտնվել է մետաղյա վանդակում, խախտվել է 5-րդ հոդված § 1-ը, քանի որ 2007թ. փետրվարի 19-ից մարտի 12-ը դիմումատուն առանց իրավական հիմքի պահվել է կալանքի տակ, և արձանագրել է 5-րդ հոդվածի § 4-ի երկու խախտում մրցակցային դատավարություն չապահովելու և

կողմերի հավասարություն չերաշխավորելու համար, ինչպես նաև կալանքի կապակցությամբ բողոքի քննման միայն այն հիմքով մերժելու համար, որ քրեական գործը այլևս նախնական քննության փուլում չէր:

Հոդված 41: 8,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխատուցման համար, նյութական վնասի փոխհատուցման պահանջը մերժվել է:

## ՀՈԴՎԱԾ 6

### Հոդված 6 (քրեական)

#### Դատարանի մատչելիություն

**Անհնարինությունը ներպետական դատարանների համար սահմանել օրենքով նախատեսված վարչական տուգանքի չափը՝ խախտումն առկա չէ**

*Segame SA v. France*

Գանգատ թիվ 4837/06

Վճիռ 7.6.2012 [Բաժանմունք V]

**Փաստերը:** Դիմումատու կազմակերպությունը սահմանափակ պատասխանատվությամբ բաց բաժնետիրական ընկերություն է որը կառավարում է պատկերասրահ: 1993թ. Փարիզի առևտրային դատարանը որոշում ընդունեց դիմումատու ընկերության դատական վերակազմակերպման և հետագա լուծարման մասին: Հաջորդ տարի հարկային մարմինները ընկերությանն ուղարկեցին երկու լրացուցիչ գույքագրման փաստաթղթեր, որոնք մասնավորապես վերաբերում էին հարկային պարտավորությունների

կատարման ոլորտում գոյացած պարտքի վճարման պահանջներին:

Գույքագրման սույն փաստաթղթերին կից ներկայացվել էր հարկային չմարված պարտավորությունների 100% չափով տուգանքի նշանակման մասին որոշում: Դատավարության ընթացքում տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունը նվազեցրեց տուգանքի չափը 100%-ից 25%-ի: Հարկային մարմինները կիրառեցին սույն նոր դրույթը դիմումատու կազմակերպության նկատմամբ: 1998թ. դիմումատու կազմակերպությունը դիմեց դատարան վերը նշված գույքագրումից և տուգանքից ազատվելու համար և պնդեց, *inter alia*, որ տուգանքը չէր համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ § 1-ի պահանջներին, քանի որ դատարանը չէր կարող սահմանել այն՝ հաշվի առնելով հարկատուի կողմից կատարված իրավախախտման լրջությունը համապատասխան սանդղակի շրջանակներում, որը պետք է սահմաներ օրենսդիրը:

Դիմումը մերժվեց: Պետական խորհուրդը (*Conseil d'Etat*) մասնավորապես գտավ, որ հարկային դատարանները հոդված 6 § 1-ին համապատասխան լիակատար իրավասություն ունեին, և այն գործերի դեպքում, երբ օրենսդիրը սահմանել է խնդրո առարկա տուգանքի ֆիքսված չափ, Կոնվենցիայի վերը նշված դրույթը չէր պահանջում, որ դատարաններն ունենային տուգանքի սահմանված չափը նվազեցնելու լիազորություն:

### Կիրառված իրավանորմ

#### Հոդված 6 § 1

Դիմումատու կազմակերպությունը  
հնարավորություն ուներ հարկային

պարտավորությունների լրացուցիչ գույքագրումից և տույժերից ազատվելու կապակցությամբ դիմել դատարան և հետագայում դատարանի որոշման դեմ ներկայացնել սովորական և իրավունքի հիմքով բողոք: Սա ամբողջական բողոքարկման գործընթաց էր, որտեղ վարչական դատարանները լայն իրավասություն ունեին ուսումնասիրելու փաստական և իրավական բոլոր հանգամանքները և ոչ միայն բեկանել կամ ուժի մեջ թողնել վարչական որոշումը, այլև փոփոխել այն կամ նույնիսկ հարկատուի իրավունքների կապակցությամբ որոշում կայացնելիս փոխարինել այդ մարմինների որոշումները իրենց սեփական որոշումներով: Հարկային գործերով դատարանները կարող էին հարկատուին ազատել սահմանված հարկերից և տույժերից, փոփոխել դրանց գումարի չափը օրենքով նախատեսված սահմաններում և կարող էին նշանակված տույժի չափն ավելացնել կամ պակասեցնել նույնպես օրենքով կանխորոշված շրջանակներում: Դիմումատու կազմակերպությունն իր գանգատում բողոքել էր, որ վարչական դատարաններն այն դեպքում, երբ նման լիազորություն օրենքով նախատեսված չէ, իրավասու չէին չվճարված հարկի կապակցությամբ նշանակված տուգանքի չափ սահմանել: Դատարանն այդուհանդերձ նշեց, որ օրենսդրությունն ինքնին տուգանքի չափը որոշակիորեն պայմանավորում էր հարկային իրավախախտման լրջությամբ, քանզի տուգանքը սահմանվում էր չվճարված հարկի գումարի որոշակի տոկոսի չափով, և դիմումատու կազմակերպությունը լայն հնարավորություն ուներ վիճարկել տուգանքի չափի հաշվարկման հիմքը: Դիմումատու կազմակերպությունը



հետևաբար հնարավորություն ուներ ներկայացնել իր կարծիքով գործի համար կարևոր բոլոր փաստական և իրավական հիմնավորումները: Դատարանը այնուհետև նշեց, որ հարկային գործերով դատավարությունը, իր յուրահատուկ բնույթից ելնելով, պետք է լինի արդյունավետ պետության շահերը պաշտպանելու համար, և հարկային գործերով վարույթները Կոնվենցիայի նպատակների իմաստով քրեական իրավունքի առանց կային մաս չեն կազմում:

*Եզրակացություն.* խախտումն առկա չէ (միաձայն):

## Հոդված 6 § 2

### Անմեղության կանխավարկած

**Վաղեմության ժամկետները լրանալուց հետո մեղավոր ճանաչելը՝ խախտումն առկա չէ**

#### *Constantin Florea v. Romania*

Գանգադ թիվ 21534/05

Վճիռ 19.6.2012 [Բաժանմունք III]

**Փաստերը:** 1996թ. հանրային դատախազի գրասենյակը քննություն սկսեց դիմումատուի դեմ՝ խարդախության, կեղծարարության և կեղծ պաշտոնական փաստաթղթեր օգտագործելու համար: 2004թ. առաջին ատյանի դատարանը գտավ, որ դիմումատուն կատարել էր այն հանցագործությունները, որոնցում նա մեղադրվում էր, սակայն կարճեց քրեական վարույթը այն հիմքով, որ բոլոր մեղադրանքների վաղեմության

ժամկետները լրացել էին 2003թ. նոյեմբերին: Ինչ վերաբերում է գործի քաղաքացիաիրավական մասին, դատարանը կարգադրեց դիմումատուին փոխհատուցել պետության կրած վնասները: Սովորական բողոքի և իրավունքի հիմքերով բողոքի արդյունքում առաջին ատյանի դատարանի որոշումը ուժի մեջ մնաց այն հիմնավորմամբ, որ առաջին ատյանի դատարանում որոշակիորեն հաստատվել է մեղադրյալին մեղասագրվող հանցագործությունները նրա կողմից կատարվելու փաստը:

#### **Հոդված 6 § 2-ի ենթադրյալ խախտումը:**

Նախկինում Դատարանի քննությանը ներկայացված գործերով վերաքննիչ դատարանները վաղեմության ժամկետը լրանալու հիմքով դատաքննությունը դադարացնելու հետ միաժամանակ բեկանել էին ստորադաս դատարանի կայացրած դատավճիռը՝ հանցագործության կատարման մեջ անձին մեղավոր ճանաչելով: Նման դատավճիռ կայացնելիս վերաքննիչ դատարանների կողմից չեն հարգվել դատաքննության ընթացքում պաշտպանության կողմի իրավունքները: Սույն գործով առաջին ատյանի դատարանն այնուամենայնիվ քննության էր առել գործի փաստական և իրավական կողմերը և ամբողջությամբ ուսումնասիրել էր դիմումատուի մեղավորության հարցը թե քրեաիրավական և թե քաղաքացիաիրավական առումով: Դիմումատուի մեղքը քրեաիրավական իմաստով հաստատվել է մի դատաքննության արդյունքում, որը Կոնվենցիայի իմաստով չի ճանաչվել անարդար, իսկ սույն դատավարության ընթացքում պաշտպանության կողմի իրավունքների նկատմամբ հարգանքի

բացակայությունը հիմնավորված չէր: Ինչ վերաբերում է գործի քաղաքացիաիրավական կողմին, առաջին ատյանի դատարանը քաղաքացիական հայցի կապակցությամբ որոշում կայացրեց ընդդեմ դիմումատուի այն բանից հետո, երբ արձանագրեց քաղաքացիական իրավախախտման մեջ պատասխանատվության բաղկացուցիչ տարրերի առկայությունը: Առաջին ատյանի դատարանը բավարար կերպով հիմնավորեց իր որոշումը, հետևաբար այն չի կարող կամայական համարվել:

*Եզրակացություն՝* խախտումն առկա չէ (միաձայն)

Դատարանը գտավ նաև, որ խախտվել է հոդված 6-ի §1-ը, որովհետև դատաքննությունը չափազանց երկար է տևել:

Հոդված 41: 1,200 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում, նյութական վնասի փոխհատուցման պահանջը մերժվել է:

## ՀՈԴՎԱԾ 8

### **Պոզիտիվ պարտավորություններ**

**Անձնական կյանքի հարգելու իրավունք**

**Մերկ երեխանների գաղտնի նկարահանումները քրեականացնող հստակ սահմանված դրույթի բացակայություն՝ խախտումը առկա է**

*E.S. v. Sweden*

Գանգաղ թիվ 5786/08

Վճիռ 21.6.2012 [Բաժանմունք V]

**Փաստերը:** 2002թ. երբ դիմումատուն տասնչորս տարեկան էր, նա բացահայտեց, որ իր խորթ հայրը լոգարանում լվացքի զամբյուղի մեջ տեսախցիկ էր թաքցրել: Տեսախցիկն ուղղված էր այն կետին, որտեղ դիմումատուն մերկացել էր, մինչև լոգանք ընդունելը: Դիմումատուն տեսախցիկը ցույց տվեց իր մորը: Մայրն այրեց ֆիլմը, և այն որևէ մեկը չտեսավ: Դեպքի մասին իրավասու մարմիններին հաղորդում ներկայացվեց 2004թ., երբ մայրն իմացավ, որ դիմումատուի խորթ հայրը տեսախցիկով նկարահանել է նաև դիմումատուի եղբորը: Խորթ հայրը քրեական հետապանդման ենթարկվեց և 2006թ. շրջանային դատարանի կողմից մեղավոր ճանաչվեց խնդրո առարկա ժամանակահատվածում գործող քրեական օրենսգրքի 6-րդ գլխի 7-րդ մասի հատկանիշներով՝ մանկահասակ երեխայի բռնաբարության փորձ: Վերաքննիչ բողոքի արդյունքում, սակայն, դիմումատուի խորթ հոր վրայից վերաքննիչ դատարանի կողմից մեղադրանքը հանվեց այն հիմնավորմամբ, որ նրա արարքը չէր համապատասխանում մանկահասակի բռնաբարության փորձի սահմանմանը: Վերաքննիչ դատարանը նշեց նաև, որ ամբաստանյալի վարքագիծը կարող էր իրենից ներկայացնել առանձին հանցատեսակ՝ երեխաների պոռնոգրաֆիայի փորձ, սակայն քանի որ այդ հանցագործության կատարման վերաբերյալ որևէ մեղադրանք չէր ներկայացվել, չհարունակեց հարցի քննարկումը: Գերագույն դատարանը մերժեց գործը վարույթ ընդունել:

Հոդված 8-ի ենթադրյալ խախտումը:

Հարցը քննարկվել է քրեական վարույթի շրջանակներում երեք ատյանի դատարաններում, որի ժամանակ դիմումատուին ներկայացրել է փաստաբանը, և դիմումատուն վնասների հատուցման պահանջ ներկայացնելու հնարավորություն ուներ: Ինչ վերաբերում է ներպետական ատյաններում գործի քննության արդյունքին, ապա վերաքննիչ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանը գտավ, որ արարքը չի կարող որակվել մանկահասակի բռնաբարության փորձ, ինչպես նախատեսված է քրեական օրենսգրքով: Այնուամենայնիվ, հստակ չէ որ քրեական հետապնդման մարմինների և շրջանային դատարանի համար պարզ է եղել, որ խորթ հոր արարքները չեն ընդգրկվում մանկահասակի բռնաբարության փորձի հանցագործության շրջանակներում: Իր հերթին վերաքննիչ դատարանն ընդգծեց, որ արարքն առնվազն տեսականորեն կարող էր որակվել որպես երեխանների պոռնոգրաֆիայի հանցագործության փորձ: Դա Դատարանի որոշելու հարցը չէ, թո ինչու խորթ հոր նկատմամբ նման մեղադրանք չի ներկայացվել: Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը գտավ, որ չի կարելի եզրակացնել, որ խնդրո առարկա ժամանակահատվածում խորթ հոր արարքը տեսականորեն նախատեսված չի եղել քրեական օրենսգրքում: Նմանապես չի կարելի եզրակացնել, որ ընթացակարգային որոշ պահանջներ անհնարին էին դարձնում դիմումատուի համար օգտվելու քրեական օրենսգրքի պրակտիկ և արդյունավետ պաշտպանությունից. քաղաքացիաիրավական պաշտպանության միջոցները նույնպես մատչելի էին նրա համար:

Դատարանի պարզաբանմանն է թողնվել մի վերջին հարց, այն է՝ արդյո՞ք քրեական օրենսգրքում գաղտնի կամ անօրինական նկարահանման փորձը քրեականացնող դրույթի բացակայությունը իրենից ներկայացնում է ներպետական օրենսդրության էական բաց: Այս կապակցությամբ Դատարանը կրկնում է, որ անձնական կյանքի պաշտպանության հարցում անհրաժեշտ է մեծ զգոնություն, որպեսզի հնարավոր լինի պայքարել տեղեկատվական նոր տեխնոլոգիաների դեմ, որոնք հնարավորություն են տալիս պահպանել և վերարտադրել անձնական տվյալները:

Շվեդիան, այնուամենայնիվ, ակտիվ քայլեր է ձեռնարկել անհատների անօրինական կամ գաղտնի նկարահանման ընդհանուր խնդրի դեմ

պայքարի ուղղությամբ՝ առաջարկելով քրեականացնել նման նկարահանումներն այն դեպքերում, երբ դրանք խախտում են նկարահանված անձի անձնական անձեռնմխելիությունը: Հետևաբար, հաշվի առնելով գործի առանձնահատուկ հանգամանքները և հատկապես այն փաստը, որ խնդրո առարկա ժամանակահատվածում խորթ հոր արարքները տեսականորեն ընդգրկված են եղել քրեական օրենսգրքի՝ մանկահասակի բռնաբարության փորձի և երեխաների պոռնոգրաֆիայի փորձի հանցակազմերում՝ սույն գործում արձանագրված բացերի բացասական ազդեցությունը շվեդական օրենսդրության ու պրակտիկայի և դրանց կիրառման վրա չի եղել այնքան էական, որ դրա հետևանքով Շվեդիայի պոզիտիվ

պարտավորությունները խախտված համարվեն:

*Եզրակացություն՝* խախտումն առկա չէ (չորս ձայնն ընդդեմ երեքի)

**Անձնական կյանքը հարգելու իրավունք**

**Ընտանեկան կյանքը հարգելու իրավունք**

**Սլովենիայի անկախությունից հետո մշտական բնակության իրավունք ունեցող անձանց ռեգիստրից հանված անձանց բնակության հարցի չկարգավորվածություն. խախտումն առկա է**

*Kurić and Others v. Slovenia [GC]*

Գանգատ թիվ 26828/06

Վճիռ 26.6.2012 [ՄԴ]

**Փաստերը:** Ութ դիմումատուները նախկինում եղել են նախկին Հարավսլավիայի և Սլովենիայից բացի նրա կազմի մեջ մտնող այլ հանրապետությունների քաղաքացիներ: Նրանք ձեռք էին բերել Սլովենիայում մշտական բնակության իրավունք, բայց Սլովենիայի անկախացումից հետո նրանք կամ չդիմեցին Սլովենիայի քաղաքացիություն ստանալու համար, կամ նրանց դիմումները մերժվեցին: 1992թ. փետրվարի 26-ին, համաձայն Օտարերկրացիների մասին նոր ընդունված օրենքի, նրանց անունները հանվեցին մշտական բնակության իրավունք ունեցող անձանց ռեգիստրից, և նրանք վերաձևեցին բնակության իրավունք չունեցող օտարերկրացիների: Եվս 25,000 անձ գտնվում էր նույն իրավիճակում: Դիմումատուները նշել են,

որ նրանցից ոչ մեկին ոչ ոք երբևէ չէր տեղեկացրել իրենց գրանցումից հանելու որոշման մասին, և իրենք բացահայտեցին, որ իրենք վերաձևել էին օտարերկրացիների միայն ավելի ուշ փուլում, երբ փորձեցին նորոգել իրենց ինքնությունը հավաստող փաստաթղթերը: Դիմումատուների անունների հանումը ռեգիստրից ունեցավ լուրջ և երկարատև բացասական

հետևանքներ. դիմումատուների մի մասը դարձավ քաղաքացիություն չունեցող անձ, մինչդեռ մնացյալ դիմումատուները վտարվեցին իրենց բնակարաններից, չէին կարողանում աշխատել կամ ճանապարհորդել, կորցրին իրենց ողջ անձնական ունեցվածքը և տարիներ շարունակ ապրում էին կացարաններում կամ այգիներում: Մինչ այժմ մնացածը կալանավորված են կամ վտարվել են Սլովենիայից:

1999թ. Սահմանադրական դատարանը հակասահմանադրական ճանաչեց Օտարերկրացիների մասին օրենքի որոշակի դրույթներ, ինչպես նաև ռեգիստրից ավտոմատ հանումը: Դատարանը պարզեց, որ վիճարկվող օրենսդրությամբ նախկին Հարավսլավիայի քաղաքացիները հայտնվել էին ավելի նվազ բարենպաստ իրավական դրության մեջ, քան մինչև Սլովենիայի անկախացումը այնտեղ ապրած այլ

օտարերկրացիները: Մասնավորապես գոյություն չունեցող որևէ իրավական ակտ, որը կկարգավորեր անցումն իրենց իրավական կարգավիճակից Սլովենիայում ապրող օտարերկրացիների կարգավիճակի: Սահմանադրական դատարանի որոշմանը հետևեց նոր օրենքի ընդունումը, որը կարգավորում էր

ռեգիստրից հանվածների իրավական դրությունը: Սահմանադրական դատարանը 2003թ. որոշմամբ նոր օրենքի որոշ դրույթներ ճանաչեց հակասահմանադրական, քանի որ, մասնավորապես, նրանք չէին տրամադրել ռեգիստրից հանված անձանց հետադարձ ուժ ունեցող մշտական բնակության թույլտվություն և չէին կարգավորել արտաքսվածների իրավական դրությունը:

2010թ. հուլիսի 13-ի վճռում Դատարանի Պալատը միաձայն գտավ, որ տեղի է ունեցել հոդված 8 և 13-ի խախտում (*ԿեՆՍ Ծանոթագրություն թիվ 132*)

**Կիրառված իրավանորմը:** Հոդված 34 (*զոհի կարգավիճակ*) Որոշումները կամ միջոցառումները, որոնք բարենպաստ էին դիմումատուների համար, սկզբունքորեն բավարար չէին նրանց զոհի կարգավիճակից զրկելու համար: Քաղաքացիություն չունեցող անձանց արտաքսմանը կամ հանձնմանը վերաբերող գործերում դիմումատուների կեցության հարցի կարգավորումը կամ այն փաստը, որ դիմումատուներին այլևս չէր սպառնում արտաքսման կամ հանձման վտանգը, սկզբունքորեն բավարար էր: Այնուամենայնիվ, դիմումատուների՝ «զոհի» կարգավիճակը կարող էր նաև կախված լինել ներպետական մակարդակում տրամադրված փոխհատուցման աստիճանից, որտեղ որ նման փոխհատուցման սահմանումն անհարաժեշտ էր կամ առնվազն վնասների փոխհատուցում ստանալու պահանջ ներկայացնելու կամ փոխհատուցում ստանալու հնարավորությամբ: Սույն գործի բնորոշ գծերից մեկը մարդու իրավունքների առումով լայն տարածում ստացած

մտահոգությունն է՝ կապված անձանց ռեգիստրից հանելու հետ: Ավելին, այս իրավիճակը շարունակվել է շուրջ քսան տարի: Մարդու իրավունքների խախտումների ճանաչումը և դիմումատուներից վեցին մշտական բնակության թույլտվության տրամադրումը նրանց համար չէր հանդիսանում <պատշաճ> և <բավարար> հատուցում՝ հաշվի առնելով երկար ժամանակահատվածը, որի ժամանակ նրանք ունեցել են անապահովության զգացում և իրավական իմաստով անորոշություն ու ռեգիստրից նրանց հանելու հետևանքների ծանրությունն իրենց համար: Ի հավելումն վերոշարադրյալի՝ հարկ է նշել, որ փոխհատուցման հարցով դիմումատուների ոչ մի պահանջ դեռևս չի բավարարվել: Փոխհատուցում ստանալու նրանց հնարավորությունը ժամանակային իմաստով շատ հեռավոր է և հետևաբար չունի որևէ կարևորություն Դատարանին ներկայացված սույն գործի շրջանակներում: Հետևաբար դիմումատուները, ովքեր ստացել էին մշտական բնակության թույլտվություն, դեռևս կարող էին ենթադրյալ խախտման <զոհ> համարվելու պահանջ ներկայացնել

*Եզրակացություն.* զոհի կարգավիճակը հաստատվեց (միաձայն)

Հոդված 8: Ռեգիստրից հանումը և դրա արձանագանքները անբարենպաստ ազդեցություն էին ունեցել դիմումատուների վրա և շարունակում են ունենալ՝ ընդհուպ համարվելով միջամտություն իրենց անձնական և ընտանեկան կյանքին: Գրանցումից դիմումատուների անունների հանումը

Հարավսլավիայի ավելի քան 25,000 այլ քաղաքացիների անունների հետ միասին հանդիսացել է անկախությունից հետո ընդունված օրենսդրության երկու դրույթների համակցված ներգործության արդյունք: Խնդրո առարկա երկու իրավական ակտերը մատչելի էին ցանկացած անձանց համար: Այնուամենայնիվ, դիմումատուները չէին կարող ողջամտորեն ակնկալել, որ օտարերկրացու իրենց կարգավիճակը Սլովենիայի տարածքում իրենց բնակությունը կդարձնեն անօրինական և կհանգեցնեն այնպիսի ծայրահեղ միջոցի կիրառման, ինչպիսին մշտական բնակության իրավունք ունեցող անձանց ռեգիստրի իրենց հանումն էր: Ավելին, ռեգիստրից դիմումատուների հանումն իրականացվել է ավտոմատ կերպով և առանց նախնական ծանուցման, ինչպես նաև դիմումատուներին հնարավորություն չէր տրվել այն վիճարկել ներպետական իրավասու մարմինների առաջ կամ տալ բացատարություն: Սլովենիայի քաղաքացիություն ստանալու համար չդիմելու պատճառների մասին: Ի հավելումն դրա՝ Սահմանադրական դատարանը գտել է, որ մշտական բնակության իրավունք ունեցող անձանց ռեգիստրից անձանց անունների հանումն ու օտարերկրացիների ռեգիստրում դրանց գրանցումն առանց բնակության թույլտվության չուներ իրավական հիմքեր ներպետական օրենսդրությունում: Վերջապես այդ ժամանակ գործող օրենսդրության մեջ գոյություն ուներ իրավական բաց, քանի որ սահմանված չէր որևէ ընթացակարգ, որով դիմումատուները կարող էին դիմել մշտական բնակության թույլտվություն ստանալու համար: Հետևաբար օրենսդրությունում և վարչական

պրակտիկայում բացակայում են կանխատեսելիության և մատչելիության անհրաժեշտ չափանիշները: Հայտնի է, որ Իրավական կարգավիճակի մասին ակտն ընդունվել էր մշտական բնակություն իրավունք տնեցող անձանց ռեգիստրից հանվածների դրությունը կարգավորելու համար: Այնուամենայնիվ սահմանադրական դատարանը սույն ակտի որոշակի դրույթներ ճանաչեց հակասահմանադրական, և ավելի քան 7 տարի պահանջվեց ընդհանուր միջոցառումներ սահմանող որոշման դրույթները կյանքի կոչելու համար: Սրանից հետևում էր, որ առնվազն մինչև 2010 թվականը իրավունքի ներպետական համակարգը հստակ չէր կարգավորել ռեգիստրից հանելու հետևանքները և ռեգիստրից հանվածների կացության կարգավիճակը: Հետևաբար դիմումատուները ոչ միայն անկարող էին, կանխատեսել վիճարկելի միջոցառումը, այլև չէին կարող կանխատեսել դրա անդրադարձը իրենց անձնական և/կամ ընտանեկան կյանքի վրա: Այսպիսով խնդրո առարկա միջամտությունը չէր համապատասխանում օրենքին:

Այնուամենայնիվ, սույն գործի առանձնահատուկ հանգամանքներում Դատարանը նաև անհրաժեշտ համարեց ուսումնասիրել՝ արդյոք միջամտությունը օրինական նպատակ էր հետապնդել և համաչափ էր դրան: Սլովենիայի անկախությունից հետո ընդունված օրենսդրության և դիմումատուների նկատմամբ ձեռնարկված միջոցառումների նպատակը չէր կարող առանձնացվել առավել լայն համատեքստից, որն ընդգրկում էր նախկին Հարավսլավիայի փլուզումը, 1991թ Սլովենիայի անկախացումը և արդյունավետ

քաղաքական ժողովրդավարության հաստատումը, ինչն առաջ բերեց «Սլովենիայի քաղաքացիների ամբողջության» ձևավորումը՝ հաշվի առնելով պառլամենտական ընտրությունները: Իշխանությունները փորձում էին ստեղծել «Սլովենիայի քաղաքացիների ամբողջություն» և այդպիսով պաշտպանել երկրի ազգային անվտանգության շահերը: Սույն նպատակը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի §2-ի իմաստով համարվում է իրավաչափ: Ինչ վերաբերում է ձեռնարկված միջոցառումների համաչափությանը, անկախության օրենսդրության մեջ իրավական բացը դիմումատուներին գրկել էր իրենց իրավական կարգավիճակից, որը նրանց նախկինում իրավունքների լայն շրջանակի մատչելիություն էր ապահովում: Օտարերկրացին, ով օրինական հիմքերով բնակվում էր տվյալ պետությունում, կարող էր ցանկություն հայտնել շարունակել բնակությունը այդ պետությունում առանց անհրաժեշտաբար այդ պետության քաղաքացիություն ձեռք բերելու: Այնուամենայնիվ, Սլովենիայի պառլամենտը չէր սահմանել դրույթներ, որոնք նապատակ կունենային թույլատրել նախկին Հարավսլավիայի քաղաքացիներին, որոնք պահպանում էին այլ հանրապետություններից մեկի քաղաքացիությունը, որպեսզի վերջիններս կարգավորեն իրենց կացության կարգավիճակը, եթե նրանք որոշել էին չդառնալ Սլովենիայի քաղաքացի կամ դիմել Սլովենիայի քաղաքացիություն ստանալու համար: Նման դրույթների առկայությունը բացասաբար չէր անդրադառնա Սլովենիայի կողմից հետապնդվող իրավաչափ նպատակի վրա: Հետևաբար, բողոքարկվող միջոցառումները չէին

համապատասխանում օրենքին և անհրաժեշտ չէին ժողովրդավարական հասարակությունում ազգային անվտանգությունը պաշտպանելու իրավաչափ նպատակին հասնելու համար:

*Եզրակացություն՝* խախտումն առկա է (միաձայն)

Հոդված 14 համակցության մեջ հոդված 8-ի հետ: Երկու խմբերի՝ «իրական» օտարերկրացիների և Սլովենիայից բացի նախկին Հարավսլավիայի հանրապետությունների քաղաքացիների հանդեպ վերաբերմունքի միջև առկա էր տարբերություն: Նախկին Հարավսլավիայի հանրապետությունների քաղաքացիները կացության կարգավիճակին վերաբերող հարցերում եղել էին նմանատիպ իրավիճակում: Քաղաքացիության վրա հիմնված տարբեկված վերաբերմունքը անհամաչափ և չափազանց ծանր բեռ էր դրել նախկին Հարավսլավիայի քաղաքացիների վրա:

*Եզրակացություն.* խախտումն առկա է (միաձայն)

Դատարանը նաև գտավ, որ խախտվել է հոդված 13-ը՝ հոդված 8-ի հետ համակցության մեջ:

Հոդված 46: Որևէ կայուն ներպետական պրակտիկայի բացակայության պայմաններում, վաղաժամ կլիներ ուսումնասիրել, թե արդյոք Կառավարության կողմից ձեռնարկված բարեփոխումների և տարբեր քայլերի արդյունքում բավարար չափով կարգավորվել էր ռեգիստրից հանվածների կացության կարգավիճակը Ամեն դեպքում վերը նշված անձանց բոլոր կատեգորիաների ներկայացուցիչներին իրենց հիմնարար իրավունքների

խախտման համար փոխհատուցման տրամադրումը մերժվել էր: Ավելին, այն իրավիճակին գնահատական տալը, որից իրենց գանգատում բողոքում էին դիմումատուները, վեր էր դիմումատուների անձնական շահերից, և անհրաժեշտ էր գործը ուսումնասիրել ընդհանուր միջոցառումների տեսանկյունից, որոնք պետք է ձեռնարկվեին՝ հաշվի առնելով Սլովենիայի գործողությունների հետևանքով այլ պոտենցիալ տուժած անձանց շահերը: Սույն գործով, հետևաբար, նպատակահարմար էր պիլոտային վճռի ընդունման ընթացակարգի հաստատումը: Միայն մի քանի նմանատիպ գանգատներ էին ներկայացվել ռեգիստրից հանված անձանց կողմից, որոնք դեռ պետք է ուսումնասիրվեին Դատարանի կողմից սակայն համակարգային, կառուցվածքային կամ նման խախտումների համատեքստում դրանց թիվը հավանաբար զգալիորեն կաճեր: Պատասխանող պետությունը հետևաբար պետք է մեկ տարվա ընթացքում ստեղծեր փոխհատուցման ներպետական *ad hoc* ծրագիր: Բոլոր նման գործերի ուսումնասիրությունը կհետաձգվի մինչև այդ միջոցառումն իրականացումը:

Հոդված 41: Վեց դիմումատուներից յուրաքանչյուրին, ում գործը հայտարարվել է ընդունելի, սահմանվել է 20,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում, իսկ նյութական վնասի փոխհատուցման հարցը հետաձգվել է:

**Ընտանեկան կյանքը հարգելու իրավունք**

**Երեխային՝ Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների Հաագայի կոնվենցիայի հիման վրա դիմումատուին վերադարձնելիս գործին առնչվող բոլոր էական հանգամանքների խորը քննության բացակայություն. գործը ներկայացվել է Մեծ պալատի քննությանը**

**X v. Latvia**

Գանգատ թիվ 27853/09

Վճիռ 13.12.2011[Բաժանմունք III]

2005թ. դիմումատուն Ավստրալիայում իր զուգընկեր S-ի հետ համատեղ ապրելու ժամանակ աղջիկ ունեցավ: Երեխայի ծննդյան վկայականը չէր պարունակում հոր անունը, և երբևէ հայրությունը որոշելու համար փորձաքննություն չի իրականացվել: 2008թ. դիմումատուն իր դստեր հետ մեկնել է Ավստրալիայից և վերադարձել իր հայրենիք՝ Լատվիա: S-ն հետագայում պահանջ ներկայացրեց Ավստրալիայի դատարաններ՝ պահանջելով ճանաչել երեխայի նկատմամբ իր հայրական իրավունքները՝ պնդելով, որ դիմումատուն փախել է Ավստրալիայից՝ վերցնելով երեխային առանց իր համաձայնության, որը հակասում է Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների Հաագայի կոնվենցիային: Ավստրալիայի դատարանը որոշեց, որ S-ն և դիմումատուն հանդիսանում են երեխայի համատեղ խնամակալները, և գործը հետագայում կվերանայվի, երբ երեխան կվերադարձվի Ավստրալիա: Երբ Լատվիայի իրավասու



մարմիններն Ավստրալիայի պատկան մարմիններից սույն գործի հետ կապված ծանուցում ստացան, Լատվիայի իրավասու մարմիններին դիմումատուի կողմից ներկայացվեց հայտարարություն առ այն, որ Հաագայի կոնվենցիան սույն գործով կիրառելի չէ, և դիմումատուն հանդիսանում է երեխայի միակ խնամակալը:

2011թ. դեկտեմբերի 13-ի վճռում Դատարանի պալատը, հինգ “կողմ” ձայն ընդդեմ երկու “դեմ” ձայնի հարաբերակցությամբ գտավ, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի հոդված 8-ի խախտում (*տես* Ծանոթագրություն թիվ 147):

2012թ հունիսի 4-ին կառավարության խնդրանքով գործը փոխանցվել է Մեծ պալատին:

## ՀՈԴՎԱԾ 9

### Խղճի ազատությունը

**Ձինվորական ծառայություն անցնելը մերժող համոզմունքներ ունենալու հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը սահմանող համապատասխան օրենսդրական համակարգի կամ ընթացակարգի բացակայությունը. *խախտումն առկա է***

*Savda v. Turkey*

Գանգատ թիվ 42730/05

Վճիռ 12.6.2012 [Բաժանմունք II]

**Փաստերը:** 1996թ. մայիսին դիմումատուն, որը Թուրքիայի քաղաքացի էր, զորակոչվեց բանակ և ընդգրկեց համապատասխան գնդի կազմում: Սակայն 1996թ. օգոստոսին դիմումատուն դասալքություն կատարեց: 1997թ. նոյեմբերին դիմումատուին ձերբակալեցին՝ նրա մոտ հայտնաբերելով զենք, նրան մեղադրանք ներկայացվեց ՔԱԿ-ին (Քրդական աշխատավորական կուսակցությանը) օգնելու և օժանդակելու համար, և դիմումատուն դատապարտվեց որոշակի ժամկետով ազատազրկման: 2004թ. նոյեմբերին՝ պատիժը կրելուց հետո, նա վերադարձավ իր կցագրման զորամաս զինվորական ծառայությունն ավարտելու համար, սակայն հրաժարվեց կրել զինվորական համազգեստ: Այնուհետև դիմումատուն իրեն հայտարարեց համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայություն իրականացնելուց հրաժարվող անձ: Սույն գործով մի շարք դատաքննություններ են ընթացել զինվորական դատարաններում: Այդ ընթացքում դիմումատուն շարունակեց հրաժարվել միանալ իր գնդին և մի քանի անգամ դասալքություն կատարեց: 2008թ. ապրիլին դիմումատուն ազատվեց զինվորական ծառայությունից և զորացրվեց իր գնդից՝ ստանալով “հակահասարակական դրսևորումներով խանգարում” ակտորոշումը:

Հոդված 9-ի ենթադրյալ խախտումը: *Բայաթյանն ընդդեմ Հայաստանի<sup>1</sup>* գործով

<sup>1</sup> *Բայաթյանն ընդդեմ Հայաստանի [ՄԴ], թիվ 23459/03, 2011թ. հուլիսի 7, նախադեպային տեղեկատվություն թիվ 143: Համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի մասին ավելի շար*

Մեծ Պալատի վճռից ի վեր զինվորական ծառայությունից հրաժարվելը, եթե դա պայմանավորված է բանակում ծառայելու պարտականության և անձի խղճի կամ խորն ու անկեղծ կրոնական կամ այլ համոզմունքների միջև լուրջ և անհաղթահարելի հակասությամբ, հանդիսանում է բավարար չափով հիմնավորված, լուրջ, միասնական և կարևոր համոզմունք 9-րդ հոդվածի երաշխիքներով պաշտպանված լինելու համար:

Սույն գործով, դիմումատուն բողոքում էր պետության բացթողումների վերաբերյալ: Ոչ մի համոզիչ կամ անվիճելի պատճառաբանություն չի ներկայացվել պարտադիր զինվորական ծառայությունից համոզմունքների հիմնավորմամբ հրաժարվելու իրավանքի ճանաչման մերժումն արդարացնելու համար: Հղումն այնպիսի հայեցակարգերի, ինչպիսին հասարակական անվտանգությունն է, անկարգությունների կանխումը կամ այլոց իրավունքների պաշտպանությունը, բավարար չէ բացատրելու համար, թե ինչու այս իրավունքի ճանաչումը չի համապատասխանում պետության հիմնական պարտականությանը: Ինչ վերաբերում է ընթացակարգի բացակայությանը, որը հնարավորություն կտար դիմումատուին հիմնավորելու, թե արդյոք ինքը համապատասխանում է համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվողի կարգավիճակի պայմաններին, դիմումատուն չի վկայակոչել որևէ կրոնական համոզմունք, սակայն նա հայտարարել է, որ ինքը

դավանում է խաղաղ և հակառազմական փիլիսոփայությունը: Կառավարությունը պնդեց, որ դիմումատուն չի կարող համարվել համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվող անձ: Հետևաբար հարց առաջացավ, թե որքանով է զինվորական ծառայությունից դիմումատուի հրաժարումն ընդգրկվում 9-րդ հոդվածի շրջանակներում: Նշվում էր, որ դիմումատուի խնդրանքը չէր ուսումնասիրվել ներպետական մարմինների կողմից: Այդ պատճառով Դատարանը, գտավ, որ նման խնդրանքն ուսումնասիրելու ընթացակարգի բացակայության պայմաններում լուրջ և անհաղթահարելի հակասություն է առաջանում զինվորական ծառայություն անցնելու պարտականության և անձի խորը և անկեղծ համոզմունքների միջև: Կոնվենցիայի 8-րդ հոդվածի նախադեպային իրավունքի համատեքստում, որը պարբերաբար ընդգծում էր պետության պոզիտիվ պարտավորություն ստեղծել իրավակարգավորիչ դաշտ դատական և իրավակիրառ պրակտիկայի համար, որպեսզի պաշտպանվի անձնական կյանքի իրավունքը, Դատարանի դիքորոշումն այն էր, որ կառավարությունը կրում էր պոզիտիվ պարտավորություն դիմումատուի համար հասանելի դարձնել արդյունավետ և մատչելի ընթացակարգ, որը հնարավորություն կտար նրան հիմնավորել, թե արդյոք ինքն իրավունք ուներ ձեռք բերել զինվորական ծառայությունից հրաժարվող անձի կարգավիճակ այն նկատառումով, որ պաշտպանվեն 9-րդ հոդվածով երաշխավորված դիմումատուի շահերը: Համակարգը, որը չէր ապահովում այլընտրանքային ծառայություն կամ վերը

*տեղեկատվության համար տե՛ս փաստերի թերթիկը սույն թեմայի վերաբերյալ:*

նշվածին համահունչ ընթացակարգ, չէր սահմանում արդար հավասարակշռություն հասարակության ընդհանուր շահի և համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց շահերի միջև: Այստեղից հետևում էր, որ տվյալ կառավարությունը չէր պահպանում 9-րդ հոդվածով սահմանված իր պարտավորությունը:

*Եզրակացություն՝* խախտումն առկա է (միաձայն):

Դատարանը նաև միաձայն եզրակացրեց, որ տեղի էր ունեցել 3-րդ հոդվածի խախտում, քանի որ դիմումատուն ենթարկվել էր նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաև առկա էր 6-րդ հոդվածի § 1-ի խախտում՝ հաշվի առնելով, որ դիմումատուից՝ որպես համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվող անձից պահանջել էին ներկայանալ զինվորական դատարան, որը չէր համապատասխանում դատարանների անկախության և անաչառության սկզբունքին:

Հոդված 41: 12,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

## ՀՈԴՎԱԾ 10

**Պոզիտիվ պարտավորություններ  
Տեղեկություններ տարածելու  
ազատությունը  
Լիցենզավորված հեռուստատեսային  
հեռարձակողին կապուղու  
հատկացման մերժումը՝ խախտումն  
առկա է**

**Centro Europa 7 S.r.l. and Di Stefano  
v. Italy [GC]**

Գանգատ թիվ 38433/09

Վճիռ 7.6.2012 [ՄԴ]

**Փաստերը:** Դիմումատուներից մեկն ընկերություն է, իսկ մյուսը այդ ընկերության օրինական ներկայացուցիչը: 1999թ. հուլիսին Իտալիայի կառավարության կողմից դիմումատու ընկերությանը համապետական ծածկույթով ցամաքային հեռուստատեսային հեռարձակման թույլտվություն էր տրամադրվել՝ տեղադրել և շահագործել անալոգային հեռարձակող ցանց, որն ընդգրկում էր պետության տարածքի 80%-ը: Ինչ վերաբերում էր հաճախականությունների հատկացմանը, արտոնագիրը հղում էր կատարում 1998թ. հաճախականության հատկացման ազգային ծրագրին՝ սահմանելով, որ դիմումատու ընկերությունը քսանչորս ամսվա ընթացքում պետք է իր սարքավորումները համապատասխանեցներ ազգային ծրագրին և դիմումատու ընկերությունը պետք է համապատասխաներ կապի ոլորտը կարգավորող մարմնի կողմից կազմված համապատասխանեցման ծրագրին: 2000թ. սկսած և դրանից հետո դիմումատու ընկերությունը մի քանի դիմում է ներկայացրել վարչական դատարաններ՝ բողոքարկելով իրեն որևէ հեռուստատեսային հաճախականության տրամադրման մերժումը: 2008թ. մայիսին *Consiglio di Stato*-ն կարգադրեց Կառավարությանը լուծել հաճախականության տրամադրման պահանջի հարցը: 2009թ. *Consiglio di Stato*-ն նաև կարգադրել է համապատասխան նախարարությանը

դիմումատու ընկերությանը փոխհատուցում վճարել շուրջ 1,000,000 եվրո, որը հաշվարկվել էր ընկերության կողմից իրեն հաճախականություն տրամադրելու իրավաչափ ակնկալիքի հիման վրա:

#### **Հոդված 10-ի ենթադրյալ խախտումը:**

Կառավարության կողմից դիմումատու ընկերությանը հաճախականության տրամադրման մերժման հետևանքով ընկերության արտոնագիրը կորցրել է իր գործնական ողջ նպատակը, քանի որ արտոնագրով նախատեսված գործունեությունը համարյա 10 տարի *de facto* անհնար էր իրականացնել: Հետևաբար, տեղի էր ունեցել միջամտություն դիմումատու ընկերության կողմից տեղեկատվության կամ գաղափարների տարածման իր իրավունքի նկատմամբ: Ավելին, ստանալով հեռարձակման թույլտվություն՝ ընկերությունը ողջամտորեն կարող էր ակնկալել, որ իրավասու պետական մարմինների կողմից քսանչորս ամսվա ընթացքում կընդունվեին իր գործունեությունը կարգավորող իրավական ակտեր, եթե դիմումատու ընկերությունը բարձրացներ իր սարքավորումների որակը: Այդուհանդերձ, հաճախականության տրամադրման ծրագիրը չիրականացվեց մինչև 2008թ. դեկտեմբեր, և դիմումատու ընկերությանն իր հաղորդումները հեռարձակելու համար մեկ ավիք տրամադրվեց միայն 2009թ. հունիսից հետո: Միաժամանակ մի քանի հեռարձակող ընկերություններ շարունակում էին ժամանակավորապես օգտագործել տարբեր հաճախականություններ, որոնք, ազգային ծրագրի համաձայն, ենթադրաբար պետք

է տրամադրվեին հեռարձակող նոր ընկերություններին: *Consiglio di Stato* գտավ, որ նման իրադրության պատճառը հիմնականում օրենսդրական խնդիրներն են: Մի շարք օրենքներ աստիճանաբար երկարաձգել են այն ժամանակատվածը, որի ընթացքում նախատեսված քանակը գերազանցող ավիքները համապետական և տեղական մակարդակում կարող էին հեռարձակել իրենց հաղորդումները: Մյուս հեռարձակող ընկերությունները, հետևաբար, թվային հեռուստատեսության գործարկման սկզբնական փուլերում զրկված էին հեռարձակվելու հնարավորությունից: Ավելին, սույն օրենքները, որոնք անորոշ էին ձևակերպված, հետաձգեցին անցումային ծրագրի ավարտը՝ հղում անելով այնպիսի իրադարձությունների վրա, որոնց տեղի ունենալու ժամկետները հնարավոր չէր կանխատեսել: Բացի այդ Եվրոպական միության արդարադատության դատարանը սույն գործի կապակցությամբ նշել է, որ ներպետական օրենսդիր մարմնի այս միջոցառումները հանգեցրեցին ժամանակավոր կարգավորումների հաջորդական կիրառման, որոնք նախատեսված էին ի շահ առկա կապուղիներն զբաղեցնող հեռարձակող ընկերությունների: Սույն գործողությունների արդյունքը եղավ այն, որ հեռարձակման հաճախականություն չունեցող հեռարձակող կազմակերպությունները հնարավորություն չունեին մուտք գործելու հեռուստատեսային հեռարձակման շուկա՝ նույնիսկ ունենալով հեռուստատեսային հեռարձակման արտոնագիր: Հետևաբար, ներպետական օրենսդրական դաշտը բավականաչափ հստակ և կոնկրետ չէր և դիմումատու ընկերությանը

հնարավորություն չէր ընձեռում բավարար հստակությամբ կանխատեսել, թե երբ իրեն կտրամադրվի հեռուստահաճախականություն հեռարձակումը սկսելու համար: Արդյունքում խնդրո առարկա օրենքները չէին համապատասխանում կանխատեսելիության պահանջներին: Վերջապես, իշխանությունները չեն պահպանել արտոնագրով սահմանված վերջնաժամկետը՝ դրանով չարդարացնելով դիմումատու ընկերության ակնկալիքները: Կառավարությունն ընկերությանը ցույց չի տվել, որ այն իր տրամադրության տակ արդյունավետ միջոց ուներ հարկադրելու իրավասու մարմիններին հետևել օրենքին և Սահմանադրական դատարանի վճռին: Հետևաբար, դիմումատու ընկերությանը չէին տրվել բավարար երաշխիքներ կամայականություններից պաշտպանվելու համար: Սույն թերությունը մասնավորապես պատճառ հանդիսացավ հեռուստառադիոհեռարձակման ոլորտում սահմանափակ մրցակցության համար: Սույն թերացումը հետևաբար հանդիսանում է Պետության կողմից զանգվածային լրատվության միջոցների արդյունավետ բազմազանության ապահովման նպատակով օրենսդրական դաշտ և վարչարարություն ներդնելու պոզիտիվ պարտավորության խախտում:

*Եզրակացություն՝* խախտումն առկա է (տասնվեց ձայնն ընդդեմ մեկի)

Դատարանը, տասչորս ձայնն ընդդեմ երեքի հարաբերակցությամբ, գտավ նաև, որ տեղի է ունեցել թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում՝ գտնելով, որ բավարար հիմք գոյություն ունի դիմումատու ընկերության

իրավաչափ ակնկալիքները՝ մասնավորապես թույլտվության հիման վրա անալոգային հեռուստատեսային կապուղու շահագործումը համարել <սեփականություն>: Հաշվի առնելով, որ Դատարանն արդեն որոշել է, որ Պետության միջամտությունը դիմումատու ընկերության 10-րդ հոդվածով նախատեսված իրավունքներին Դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում բավարար չափով կանխատեսելի հիմք չունեն, թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի կապակցությամբ Դատարանը հանգել է նույն եզրակացությանը:

Հոդված 41: 10,000,000 եվրոյի փոխհատուցում դիմումատու ընկերությանը որպես նյութական և ոչ նյութական վնասի փոխհատուցում:

**Արտահայտվելու ազատություն**  
**Պառլամենտի շենքից դուրս կեղտոտ լվացք կախելու համար անօրինական հավաքի մեղադրանքով դատապարտում՝ խախտումն առկա է**

*Tatár and Fáber v. Hungary*

Գանգատ թիվ 26005/08 և 26160/08

Վճիռ 12.6.2012 [Բաժանմունք II]

**Փաստերը:** Դիմումատուները քաղաքական բողոք անցկացնելուց հետո դատական հետապնդման են ենթարկվել և տուգանվել անօրինական հավաքներ անցկացնելու համար: Դիմումատուների սույն արարքը ներառում էր Բուդապեշտի պառլամենտի շենքը շրջապատող ցանկապատին լվացք

կախելը, ինչը խորհրդանշում էր «ժողովրդի կեղտոտ լվացքը»: Բողոքի ցույցին, որը տևել է ընդամենը 13 րոպե, ներկա են գտնվել քիչ թվով լրագրողներ, ովքեր իրադարձության մասին տեղեկացել էին դիմումատուների էլեկտրոնային կայքից և հավաքվել էին ցույցի անցկացման վայրում հարցախոյզի նպատակով: Իրավախախտման համար դիմումատուներին մեղավոր ճանաչելիս ներպետական դատարանները որոշեցին, որ Հավաքների մասին օրենքի 6-րդ մասի համաձայն՝ բողոքի ցույցն իրենից ներկայացնում էր «կազմակերպված իրադարձություն», այլ ոչ թե մշակութային իրադարձություն, և հետևաբար պետական մարմինները պետք է օրենքով նախատեսված ժամկետում՝ բողոքի ակցիայից երեք օր առաջ ծանուցվեին:

#### **Հոդված 10-ի ենթադրյալ խախտումը:**

Վիճելի իրադարձությունը, որին ներգրավված է եղել միայն երկու մարդ և որը շատ կարճ է տևել, գերազանցապես ընդգրկում է անձի արտահայտման ոլորտը, հետևաբար կարգավորվում է 10 հոդվածով: Տուգանքի սահմանումը հանդիսացել է միջամտություն դիմումատուների արտահայտվելու ազատության իրավունքին և հետապնդել է հասարակության անվտանգության ապահովման, այլոց իրավունքների պաշտպանության և անկարգությունների կանխման օրինական նպատակ: Եթե միջամտությունն անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում, ապա չկար անհրաժեշտություն պարզելու՝ արդյոք միջամտությունը նախատեսված էր օրենքով: Դիմումատուների բողոքի ցույցը չէր կարող համարվել հավաք: Փաստը, որ «արտահայտվելը» տեղի է ունեցել հրապարակայնորեն, այն

անպայմանորեն չի վերաճում հավաքի: Ինչպես «միավորումը», այնպես էլ «հավաքը» Կոնվենցիայի նպատակների տեսանկյունից ինքնավար նշանակություն ունեն: Վերը նշված հասկացության դասակարգումը ներպետական իրավունքում հանդիսանում է ոչ ավելին քան սկզբնակետ «Հավաքն» իրենից ներկայացնում է գաղափարների փոխանակման յուրահատուկ ձև, որում անորոշ թվով անձանց համախմբումը, որոնք ունեն գաղափարների փոխանակման գործընթացին մասնակցելու նույնացվող նպատակը, կարող է ինքնին լինել գաղափարի ինտենսիվ արտահայտում: Նման դեպքերում այս կամ այն գաղափարի աջակցությունն արտահայտվում է հենց միայն մի խումբ անձանց ներկայությամբ մասնավորապես ընդհանուր վերցրած հանրության համար հասանելի վայրերում: Հավաքը կարող է նաև գաղափարների փոխանակման միջոց ծառայել հավաքին ելույթ ունեցողների և հավաքի մասնակիցների միջև: Դիմումատուների գործով «հավաքի» սույն բաղկացուցիչ տարրերը բացակայում էին: Թեև իրադարձության մասին ինտերնետով գովազդվել է, չի եղել մտադրություն միջոցառմանը ներգրավել այլ մասնակիցների, բացի մի քանի լրագրողներից: «Քաղաքական ներկայացման» նպատակը մեծամասամբ զանգվածային լրատվության միջոցներով հաղորդագրություն ուղարկելն էր, քան ցուցարարների անմիջական հավաքվելու խրախուսումը (ինչին հասնելը 13 րոպեների ընթացքում ցանկացած պարագայում գործնականում անհնար էր):

Երկու դիմումատուների պարզ փոխազդեցությամբ գաղափարի

արտահայտումը որպես հավաք որակելով՝ իշխանություններն այդ միջոցառումը ընդգրկել են Հավաքների մասին օրենքի կարգավորման ոլորտ՝ վկայակոչելով պետական մարմիններին միջոցառման մասին ծանուցելու պարտականությունը: Եթե որոշ դեպքերում միջոցառման մասին նախնական ծանուցումը կարող էր արդարացված լինել՝ իշխանություններին հնարավորություն ընձեռելով արդյունավետ կերպով համակարգել և աջակցել հավաքի անցկացմանը, սույն գործում նման անհրաժեշտություն չկար, քանի որ որևէ ապացույց չկա, որ վեր նշված միջոցառումը որևէ ազդեցություն է ունեցել հասարակական կարգի կամ այլոց իրավունքների պաշտպանվածության վրա: Հավաքների հասկացության վերաբերյալ պետական մարմինների մոտեցումը չէր համապատասխանում ծանուցման մասին կանոնի նպատակին, և այդ կանոնի կիրառումը «հավաքներից» բացի նաև «արտահայտման» նկատմամբ, ստեղծում է նախնական սահմանափակում, որը անհամատեղելի է գաղափարների ազատ փոխանակման հասկացության հետ:

Կառավարությունն այնուամենայնիվ դիմումատուների արտահայտվելու ազատությանը միջամտելու կապակցությամբ գործին առնչվող և բավարար պատճառներ չէր ներկայացրել:

*Եզրակացություն՝* խախտումն առկա է (միաձայն):

Հոդված 41: Յուրաքանչյուր դիմումատուին 1,500 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

**Քրեակատարողական հիմնարկի ներսում կալանավորի հետ**

**հարցազրույցի նկարահանման բացարձակ արգելք՝ խախտումն առկա է**

**Schweizerische Radio- und Fernsehgesellschaft SRG v. witzerland**

Գանգատ թիվ 34124/06

Վճիռ 21.6.2012 [Բաժանմունք V]

**Փաստերը:** 2004թ. օգոստոսին դիմումատուն՝ ռադիո և հեռուստատեսային հեռարձակում իրականացնող ընկերությունը թույլտվություն էր խնդրել հեռուստատեսային հաղորդման համար նկարահանել սպանության համար պատիժը կրող բանտարկյալի՝ նպատակ ունենալով այդ բանտարկյալից հարցազրույց վերցնել նույն գործով մեղադրված այլ անձի դատավարության մանրամասների մասին և այդ հարցազրույցը հեռարձակել: Բանտարկյալը, ում գործը գրավել էր զանգվածային շատ լրատվամիջոցների ուշադրությունը, համաձայնեց հարցազրույց տալ: Խնդրանքը մերժվեց քրեակատարողական հիմնարկում խաղաղություն, կարգ և անվտանգություն ապահովելու պատճառաբանությամբ, ինչպես նաև բանտարկյալների նկատմամբ հավասար վերաբերմունք երաշխավորելու համար: Դիմումատու ընկերությունը այս որոշման դեմ բազմաթիվ բողոքներ ներկայացրեց, սակայն ապարդյուն է:

**Հոդված 10-ի ենթադրյալ խախտումը:** Հեռուստատեսային ծրագրի համար բանտարկյալից հարցազրույց վերցնելու նպատակով քրեակատարողական հիմնարկի ներսում նկարահանում

իրականացնելու՝ դիմումատուի խնդրանքի մերժումը մասնավորապես համարվում էր միջամտություն արտահայտվելու ազատությանը: Միջամտությունը նախատեսված էր օրենքով և նպատակ էր հետապնդում կանխել անկարգությունները և պաշտպանել այլոց իրավունքները: Այնուամենայնիվ, քանի որ արտահայտվելու ազատությունը հեռուստատեսային հեռարձակման համատեքստում վերաբերում է առանձնահատուկ հասարակական շահի, Շվեյցարիայի կառավարության հայեցողության շրջանակը որոշելու՝ արդյոք իրավունքի իրականացմանը միջամտող միջոցառումը համապատասխանում է «գերակա հասարական կարիքին», սահմանափակ է: Վերը նշվածը հիմք է տալիս համարելու, որ դիմումատու կազմակերպության խնդրանքի մերժումը անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում՝ մասնավորապես այն անձի անմեղության կանխավարկածից ելնելով, ում դատավարությունը պետք է տեղի ունենա և արդարադատության պատշաճ իրականացման շահերի հիմնավորմամբ: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ դիմումատուի խնդրանքի մերժումը անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում՝ հաշվի առնելով անձի անմեղության կանխավարկածը, ում դատը պետք է տեղի ունենա և արդարադատության պատշաճ իրականացման շահերը Սակայն իրավասու պետական մարմինները պետք է պատշաճորեն ուսումնասիրեին՝ արդյոք սույն գործի շրջանակներում անվտանգության և այլոց իրավունքների պաշտպանության պատճառաբանությամբ դիմումատուի կողմից բանտի ներսում

նկարահանում իրականացնելու արգելումն իրականում և արդյունավետորեն անհրաժեշտ է:

Մասնավորապես պետական մարմինները պետք է հաշվի առնեին դիմումատու կազմակերպության պատրաստակամությունը գնալ զիջումների, այն է՝ նկարահանումը կատարել այն ժամանակ, երբ մյուս կալանավորներն աշխատում էին և հարցազրույցն իրականացնել կարճ ժամանակում: Իր բողոքում դիմումատու կազմակերպությունն առաջարկեց, որ նկարահանումն իրականացվի այցելությունների սենայակում, որը կարող էր այդ կապակցությամբ փակ պահվել: Ներպետական մարմիններն, այնուամենայնիվ այս փաստարկը հաշվի չէին առել: Այդ պատճառով այն փաստարկը, որ նկարահանումը կմիջամտեր այլ կալանավորների անձնական կյանքին հիմնավոր և բավարար չէ միջամտությունը դիմումատու կազմակերպության արտահայտվելու ազատությանն արդարացնելու համար: Բանտում կարգ և անվտանգություն պահպանելու կապակցությամբ ոչ՝ ներպետական մարմինները, ոչ՝ Կառավարությունը չեն բացատրել, թե գործնականում ինչպես կարող էին բանտի կարգուկանոնն ու անվտանգությունը իրական սպառնալիքի տակ դրվել, հատկապես եթե հարցազրույցը նկարահանվեր դիմումատու ընկերության կողմից առաջարկված սահմանափակ պայմաններում՝ մեկ օպերատորի և մեկ լրագրողի մասնակցությամբ, ում ներկայությունը հազիվ թե խանգարեր քրեակատարողական հիմնարկի



գործունեությանը կամ կսպառնար դրա անվտանգությանը:

Ավելին, 10-րդ հոդվածը պաշտպանում է ոչ միայն արտահայտվող գաղափարների և տեղեկատվության էությունը, այլ նաև այն միջոցները, որոնցով դրանք փոխանցվել են: Հետևաբար ոչ՝ ներպետական դատարանները, ոչ՝ Դատարանը չպետք է փոխարինեն զանգվածային լրատվամիջոցների մոտեցումները իրենց սեփական մոտեցումներով այն հարցի շուրջ, թե ռեպորտաժ պատրաստող լրագրողը լրատվության հաղորդման ինչ հնարք պետք է գործածի: Այսպիսով այն փաստը, որ բանտարկյալի հետ հեռախոսային հարցազրույցը հեռարձակվել է դիմումատու ընկերության կողմից իր էլեկտրոնային կայքով էական չէ. հարցազրույցի համար օգտագործվել են տարբեր միջոցներ և հնարքներ, որոնք դիտողների վրա նման ուղղակի ազդեցություն չեն ունեցել, և հարցազրույցը հեռարձակվել է այլ հաղորդման շրջանակներում: Հետևաբար հարցազրույցի հեռարձակումը ոչ մի կերպ չի փոխհատուցել բանտում նկարահանման թույլտվության մերժմամբ իրականացված միջամտությունը:

Ճշմարիտ է, որ ներպետական մարմինները Դատարանից ավելի լավ հնարավորություն ունեն որոշելու արդյոք քրեակատարողական հիմնարկ կողմնակի անձանց մուտքը թույլատրելը կխախտի բանտի կարգուկանոնն ու անվատնագությունը և ինչ չափով կխախտի: Այնուամենայնիվ, հաշվի առնելով ներպետական մարմինների կողմից վերը նշված հարցի կապակցությամբ տրված բավական ամփոփ պատճառաբանությունը և իրենց

որոշումներում սույն գործում առկա շահերի իրական հավասարակշռման բացակայությունը, նրանք համոզիչ կերպով չեն հիմնավորել, որ դիմումատու ընկերության կողմից բանտում նկարահանման բացարձակ արգելքը խիստ համաչափ էր հետապնդվող նպատակներին:

*Եզրակացություն՝* խախտումն առկա է (հինգ ձայնն ընդդեմ երկուսի)

Հոդված 41: Փոխհատուցում չի տրամադրվել:

## ՀՈԴՎԱԾ 11

**Հավաքների և միավորման ազատություն**

**Իսլամիստական կազմակերպության գործունեության արգելումը կազմակերպության կողմից բռնություն քարոզելու համար գանգատը ճանաչվել է անընդունելի**

*Hizb Ut-Tahrir and Others v. Germany(dec.)*

Գանգատ թիվ 31098/08

Որոշում 12.6.2012 [Բաժանմունք V]

**Փաստերը:** Դիմումատու միավորումը հիմնվել է Երուսաղեմում 1953թ. և սկսած 1960-ական թթ. Գերմանիայում ակտիվ գործունեություն է ծավալել: Այն բնորոշում էր իրեն որպես «զլոբալ իսլամական քաղաքական կուսակցություն և/կամ կրոնական հանրույթ»: Երկրորդ դիմումատուն Եվրոպական դատարանում գործի քննության ժամանակ միավորման ներկայացուցիչն է եղել: 2003թ.

հունվարին ներքին գործերի դաշնային նախարարությունը որոշում ընդունեց արգելել Գերմանիայում դիմումատու միավորման գործունեությունը և կարգադրեց բռնագրավել կազմակերպության գույքն այն հիմքով, որ դրա գործունեությունն ուղղված էր միջազգային հասկացողության սկզբունքի դեմ և բռնության գործադրում էր քարոզում: Այդ որոշումը չեղյալ ճանաչելու մասին դիմումը մերժվեց դաշնային վարչական դատարանի կողմից: Դաշնային սահմանադրական դատարանը մերժեց քննության առնել միավորման սահմանադրական գանգատը:

#### **Հոդված 11-ի ենթադրյալ խախտումը:**

Դատարանը վերահաստատեց իր դիրքորոշումը, որ Կոնվենցիայի 17-րդ հոդվածի ուժով անհատները կամ խմբերը չեն կարող իրացնել Կոնվենցիայի որևէ իրավունք այնպիսի գործունեության մեջ ներգրավվելու կամ այնպիսի գործողություն իրականացնելու համար, որը նպատակ է հետապնդում խախտել Կոնվենցիայով նախատեսված որևէ իրավունք կամ ազատություն: Դաշնային վարչական դատարանը, մանրամասն վերլուծելով դիմումատու միավորման կողմից տպագրված մի շարք հոդվածներ և երկրորդ դիմումատուի կողմից կատարված հրապարակային հայտարարությունները, եզրակացրեց, որ դիմումատու միավորումը հերքում էր Իսրայելի պետության գոյության իրավունքը և կոչ էր անում դրա բռնի ոչնչացմանը և այդ պետության բնակիչների արտաքսմանն ու սպանությանը: Մասնավորապես, երկրորդ դիմումատուն հաճախ է արդարացրել մահապարտների հարձակումները, որոնց ընթացքում Իսրայելում

քաղաքացիներ են սպանվել, և Դատարանում դատավարության ընթացքում երկրորդ դիմումատուն և միավորումը հանդես են գալիս այդ տեսակետի դիրքերից: Դիմումատու միավորումը փաստորեն փորձ էր անում շեղել հոդված 11-ով նախատեսված հավաքների և միավորումների ազատության իրավունքը իր իրական նպատակներից՝ օգտագործելով այդ իրավունքը մի նպատակի համար, որը ակնհայտորեն հակասում է Կոնվենցիայի արժեքներին, հատկապես միջազգային վեճերի խաղաղ լուծման պարտավորությանը և մարդու կյանքի անձեռնմխելիությունը: Հետևաբար 17-րդ հոդվածի նպատակներից ելնելով՝ միավորումը չի կարող օգտվել 11-րդ հոդվածով տրամադրված պաշտպանությունից:

*Եզրակացություն՝ գանգադր ճանաչվել է անընդունելի (գանգատը չի համապատասխանում *ratione materiae* սկզբունքին):*

Դատարան անընդունելի ճանաչեց նաև դիմումատու միավորման մյուս գանգատները (Կոնվենցիայի 6-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով և 1-ին Արձանագրություն 1-ին հոդվածով նախատեսված իրավունքների ենթադրյալ խախտումների կապակցությամբ):

#### **ՀՈԴՎԱԾ 13**

**Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք Ոստիկանության կողմից վատ վերաբերմունքի հետևանքով կրած ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու**

**անհնարինություն. խախտումն առկա է**

***Poghosyan and Baghdasaryan v. Armenia***

Գանգատ թիվ 22999/06  
Վճիռ 12.6.2012 [Բաժանմունք III]

(Տե՛ս ներքևում 7-րդ Արձանագրության 3-րդ հոդվածը, էջ 24 )

#### **ՀՈԴՎԱԾ 14**

**Խտրականություն (Հոդված 8)**

**Միասեռ զույգերի դեպքում երկրորդ ծնողի կողմից երեխայի որդեգրման անհնարինությունը.** Պալատի կողմից գործի ընդգատությունը զիջվել է *Մեծ Պալատին*

***X and Others v. Austria***

Գանգատ թիվ 19010/07  
[Բաժանմունք I]

Առաջին և երրորդ դիմումատուները կայուն հարաբերությունների մեջ գտնվող երկու կանայք են, իսկ երկրորդ դիմումատուն երրորդ դիմումատուի անչափահաս որդին է: Առաջին դիմումատուն ցանկություն էր հայտնել որդեգրել երկրորդ դիմումատուին, որպեսզի իրենց միջև ստեղծվեն իրավական հարաբերություններ՝ առանց վերացնելու իր հարաբերությունները տղայի մոր հետ: Այդ նպատակով առաջին և երկրորդ դիմումատուների միջև կնքվեց որդեգրման համաձայնագիր: Այնուամենայնիվ ներպետական դատարանները մերժեցին հաստատել

կնքված որդեգրման համաձայնագիրը՝ գտնելով, որ մեկ անձի կողմից կատարվող որդեգրումը կխզի նույն սեռի կենսաբանական ծնողի հետ երեխայի ընտանեկան իրավահարաբերությունները: Եվրոպական դատարան ուղղված իրենց գանգատում դիմումատուները նշում էին, որ համաձայն 14-րդ հոդվածի՝ համակցված 8-րդ հոդվածի հետ՝ իրենց նկատմամբ խորթ երեխայի որդեգրման հարցում դրսևորվել է խտրականություն՝ ելնելով առաջին և երրորդ դիմումատուների սեռական կողմնորոշումից:

#### **ՀՈԴՎԱԾ 17**

**Իրավունքների և ազատությունների չարաշահում**

**Իսլամիստական կազմակերպության գործունեության արգելում կազմակերպության կողմից բռնություն քարոզելու համար.** գանգատը ճանաչվել է *անընդունելի*

***Hizb Ut-Tahrir and Others v. Germany (dec.)***

Գանգատ թիվ 31098/08  
Որոշում 12.6.2012 [Բաժանմունք V]

(Տե՛ս վերևում հոդված 11-ը, էջ 16)

#### **ՀՈԴՎԱԾ 34**

**Զոհ**

Անձի հետ անխզելիորեն կապված և 3-րդ հոդվածով նախատեսված իրավունքների անփոխանցելիությունը, եթե դատավարության ելքի հարցում

բացակայում է բարոյական շահը, կամ առկա է այլ էական պատճառ.  
*գանգալը ճանաչվել է անընդունելի*

***Kaburov v. Bulgaria (dec.)***

Գանգատ թիվ 9035/06

Որոշում 19.6.2012 [Բաժանմունք IV]

**Փաստերը:** 1997թ. դիմումատուի հայրը ենթադրաբար վատ վերաբերմունքի էր ենթարկվել ոստիկանության կողմից: Հետագայում քրեական դատավարության ժամանակ ներպետական դատարանները եզրակացրեցին, որ նա ձերբակալման ժամանակ դիմադրություն է ցույց տվել, և նրա նկատմամբ ֆիզիկական ուժի գործադրումը արդարացված է եղել: Դիմումատուի հայրը մահացավ 2000թ., և դիմումատուն ներգրավվեց իր հանգուցյալ հոր կողմից հարուցված քաղաքացիական հայցով գործի քննությանը, որը դիմումատուի ներգրավման ժամանակ դեռ չէր ավարտվել: Հայցը դիմումատուի հոր կողմից հարուցվել էր պետության դեմ, և դրանով պահանջվում էր դիմումատուի հորը հատուցել պատճառված վնասները: Գործի քննության արդյունքում հայցը մերժվեց:

**Հոդված 34-ի ենթադրյալ խախտումը:**

Դիմումատուն բողոքարկում էր պետական մարմինների կողմից իր հոր նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքը և արդյունավետ քննություն չիրականացնելը: Չնայած Դատարանը սովորաբար թույլ է տալիս դիմումատուի շահերի պաշտպանությունը մերձավոր հարազատի կողմից, եթե սկզբնական դիմումատուն մահացել է գանգատը ներկայացնելուց հետո, սույն գործում իրավիճակն այլ է. անմիջական զոհը

մահացել է մինչ Դատարան գանգատ ներկայացնելը: Այն գործերի պարագայում, որտեղ ենթադրյալ խախտումները անմիջականորեն կապված չեն անհետացման կամ մահվան հետ, Դատարանն ունի ավելի սահմանափակող մոտեցում և գտնում է, որ Կոնվենցիայով նախատեսված որոշակի իրավունքներ խիստ անձնական են և այլ անձանց փոխանցելի չեն: Դիմումատուի գործում չկար պատճառական կապ իր հոր նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի և վերջինիս մահվան միջև, որը տեղի է ունեցել, երբ ներպետական քրեական և քաղաքացիական վարույթները դեռևս ընթացքի մեջ էին: Այնուամենայնիվ, այս երկու վարույթի և դիմումատուի կողմից Դատարան ներկայացված գանգատի առանցքը Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված խիստ անձնական իրավունքներն են: Դատարանը չէր բացառում, որ այն կարող է 3-րդ հոդվածով նախատեսված իրավունքի կապակցությամբ ներկայացված գանգատները ճանաչել փոխանցելի այն դիմումատուներին, ովքեր բողոքում են հանգուցյալ հարազատների նկատմամբ վատ վերաբերմունքի կապակցությամբ: Այնուամենայնիվ, այդպիսի

դիմումատուները կամ պետք է ապացուցեն, որ ներպետական ատյաններում գործի ելքի նկատմամբ ունեին բարոյական ուժեղ շահ, որը վեր է զուտ նյութական շահից, կամ պետք է ներկայացնեն այլ անհաղթահարելի պատճառներ, ինչպիսին է կարևոր ընդհանուր շահը, որը պահանջում է գործի ուսումնասիրություն: Դիմումատուն որևէ նման պատճառաբանություն չի ներկայացրել, և ներպետական ատյաններում վարույթները, որոնց ինքը

մասնակցություն է ունեցել, հիմնականում վերաբերել են փոխհատուցմանը: Կոնվենցիայի հոդված 34-ով նախատեսված <զոհի> հասկացությունն ունի ինքնավար բնույթ և կախված չէ ներպետական իրավունքի կանոններից: Ավելին, դիմումատուն իր գանգատը ներկայացրել է քննության ավարտից շատ տարիներ անց, որի արդյունավետությունը կարող էր լինել սույն գործում միակ ընդհանուր շահը:

*Եզրակացություն՝ գանգատը ճանաչվել է անընդունելի (զոհի կարգավիճակի առկա չէ)*

### ՀՈԴՎԱԾ 35

#### Հոդված 35-ի § 1

**Ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառումը**  
**Իրավական պաշտպանության սահմանադրական միջոցը հասանելի է միայն իրավական պաշտպանության ոչ արդյունավետ միջոցների կիրառումից հետո. նախնական առարկությունը մերժվել է**

*Ištván and Ištvánová v. Slovakia*

Գանգատ թիվ 30189/07

Վճիռ 12.6.2012 [Բաժանմունք III]

**Փաստերը:** Եվրոպական դատարան ուղղված իրենց գանգատում դիմումատուները բողոքում էին քաղաքացիական դատավարության երկարատև լինելուց: Կառավարությունը առարկեց, որ դիմումատուները չէին սպառել ներպետական պաշտպանության

միջոցները, քանի որ չնայած իրենք բողոք են ներկայացրել Սահմանադրության 127-րդ հոդվածի շրջանակներում, դա մերժվել է Սահմանադրական դատարանի կողմից այն հիմքով, որ իրենք շրջանային դատարանին պատշաճ հնարավորություն չեն տվել կոնկրետ իրադրությունում Դատարանների մասին օրենքի համաձայն՝ իրավունքի պաշտպանության միջոց կիրառել:

Հոդված 35-ի §1-ի ենթադրյալ խախտումը (*իրավունքի պաշտպանության ներպետական միջոցների սպառումը*): Սահմանադրության 127-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության միջոցը ընդհանրապես համարվում էր իրավունքի պաշտպանության միջոց, որը պահանջում էր իրավունքի պաշտպանության մյուս միջոցների սպառում, ինչպես բխում է Կոնվենցիայով նախատեսված նպատակներից: Այս պարագայում խոսքը վերաբերում էր այն գործերին, որոնք կապված էին անհամաչափ երկարատև դատաքննության հետ: Պաշտպանության վերը նշված միջոցը նախատեսում էր և կանխարգելիչ, և փոխհատուցող բավարարում: Սակայն պաշտպանության այդ միջոցի վերջնական ազդեցությունը դիմումատուի վրա կարող էր փոխվել, եթե այդ միջոցի հասանելիությունը դրվում էր կախման մեջ այն հանգամանքից, թե արդյոք դիմումատուն նախքան պաշտպանության այդ միջոցն օգտագործելը, գանգատ է ներկայացրել դատարանի նախագահին, ինչպես նախատեսված է Դատարանների մասին ակտում: Նման գանգատը փոխհատուցում առաջ չէր բերում և համեմատելի էր Պետության կողմից դատարանների մասին ակտի կիրառման շրջանակներում նախատեսված գանգատի

հետ, որը ճանաչվել է իրավական պաշտպանության ոչ արդյունավետ միջոց: Ավելին, Սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքում հակասություններ կային՝ կապված այն ժամանակահատվածի հետ, որը պետք է անցներ մինչև սահմանադրական բողոք ներկայացնելու իրավունքի առաջացում: Նախքան Սահմանադրական դատարան գանգատ ներկայացնելը դիմումատուի կողմից իրավունքի պաշտպանության միջոցներն սպառելու պահանջի կատարումը փաստորեն կախված էր մի շարք անհատականություններից, և այս իմաստով բացակայում էր որևէ վստահելի ուղեցույց կամ կանխատեսելի արդյունք: Նման իրադրությունը չէր համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին:

*Եզրակացություն՝* նախնական առարկությունները վերացվել են (հինգ ձայնն ընդդեմ երկուսի)

Հոդված 6 § 1: Հաշվի առնվող ժամանակահատվածը տևել է մոտավորապես վեց տարի և հինգ ամիս դատավարության երկու փուլերի համար և չափազանց էր:

*Եզրակացություն՝* խախտում (հինգ ձայնն ընդդեմ երկուսի)

Դատարանը գտավ նաև 13-րդ հոդվածի խախտում՝ 6-րդ հոդվածի § 1-ի հետ համակցության մեջ:

Հոդված 41՝ 3,250 եվրո փոխհատուցում որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

### **Վեցամսյա ժամկետը**

**Կոնվենցիայով նախատեսված վեցամսյա ժամկետը լրանալու հարցը լուծելիս ոչ աշխատանքային օրը հաշվի առնելը՝ անկախ ներպետական օրենքում արտահայտված դիրքորոշումից. նախնական առարկությունը թույլատրվել է**

### ***Sabri Güneş v. Turkey [GC]***

Գանգատ թիվ 27396/06

Վճիռ (նախնական առարկություններ) 29.6.2012[ՄԴ]

**Փաստերը:** *Dies de quem'* դա այն օրն է, երբ լրացավ վեցամսյա ժամկետը: Այդ օրը կիրակի էր: Այդ պատճառով դիմումատուն Դատարան իր գանգատը ներկայացրել է հաջորդ աշխատանքային օրը՝ երկուշաբթի:

2011թ. մայիսի 24-ի վճռում Դատարանի պալատը գտավ, որ ժամկետը պետք է երկարաձգվի մինչև հաջորդ աշխատանքային օրը: Հետևաբար, դիմումատուն բավարարել է վեցամսյա ժամկետի պահանջը, նրա գործը ուսումնասիրվել է, և Դատարանը, հինգ ձայնն ընդդեմ երեքի հարաբերակցությամբ, գտել է, որ խախտվել է հոդված 6-ի § 1-ը:

**Հոդված 35 § 1-ի ենթադրյալ խախտումը** Խնդիրը նրանումն է, որ եթե *dies de quem-*ը լիներ շաբաթ, կիրակի կամ ցանկացած այլ պաշտոնական տոն կամ պաշտոնական տոն համարվող օր, արդյո՞ք վեցամսյա ժամկետը այնուամենայնիվ պետք է երկարաձգվեր մինչև հաջորդ աշխատանքային օրը:

Իր վճռում Պալատը նշեց, որ Դատարանը *dies ad quo* օրերը որոշելիս միշտ հաշվի է առել ներպետական օրենքը և պրակտիկան ու որոշեց *dies ad quem*-ի կապակցությամբ կիրառել նույն մոտեցումը: Այնուամենայնիվ Մեծ պալատի կարծիքով Կոնվենցիայի ինստիտուտների նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը բացահայտեց, որ որքան էլ, որ ներպետական օրենքն ու պրակտիկան հաշվի առնելն ընդունելի է, դա որոշիչ չէ վեցամսյա ժամկետը հաշվարկելու համար: Վեցամսյա ժամկետի կանոնն ինքնավար բնույթ ունի, որը յուրաքանչյուր գործով պետք է մեկնաբանվի և կիրառվի այնպես, որ երաշխավորվի անհատական զանգատի իրավունքի արդյունավետ իրականացումը: Ավելին, ժամկետների հաշվարկման ժամանակ Դատարանի կողմից ներպետական կանոններից անկախ սեփական չափանիշների կիրառումը նպատակ ունի երաշխավորել իրավական որոշակիությունը, արդարադատության պատշաճ իրականացումը և այդպիսով կոնվենցիոն մեխանիզմների պրակտիկ և արդյունավետ գործարկումը: Փաստորեն, եթե Դատարանը *dies ad quem*-ի հարցը քննարկելիս սահմանափակված լիներ ներպետական օրենսդրությամբ և պրակտիկայով, ապա Դատարանը պետք է կազմեր Կոնվենցիայի անդամ 47 երկրների պաշտոնական տոների ամբողջական ցուցակ: Ավելին, հաշվի առնելով հնարավոր դիմումատուներին հասանելի կապի բազմազան միջոցները (փոստ, ֆաքս, էլեկտրոնային կապ, ինտերնետ և այլն), վեցամսյա ժամկետը այժմ ավելին քան երբևէ բավարար է որոշելու թե արդյոք պետք է զանգատ ներկայացնել և եթե այո, ապա որոշելու

նաև զանգատի բովանդակությունը: Այսպիսով, քանի որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մեջ ժամկետի հաշվարկման վերաբերյալ ընդհանուր համաձայնություն չկա, Դատարանը գտավ, որ այն պետք է հետևի իր կողմից հաստատված մոտեցմանը: Վերոնշյալի դատադրությունների լույսի ներքո Դատարանը պատճառ չի տեսնում իր մոտեցումից շեղվելու համար:

Այսպիսով, քանի որ Գերագույն զինվորական վարչական դատարանի 2005թ. նոյեմբերի 16-ի վերջնական որոշումը դիմումատուին հանձնվել է 2005թ. նոյեմբերի 28-ին, հոդված 35 § 1-ով նախատեսված վեցամսյա ժամկետը սկսվել է հետևյալ օրը՝ նոյեմբերի 2-ին և սպառվել է՝ 2006թ. մայիսի 28-ին՝ կիրակի օրը երեկոյան: Դիմումը ներկայացվել է 2006թ. մայիսի 29-ին, այսինքն վերոնշյալ ժամկետի ավարտից հետո: Դատարանը գտնում էր, որ այն փաստը, որ վեցամսյա ժամկետի վերջին օրը կիրակի օր էր և որ նման հանգամանքներում ներպետական օրենսդրության համաձայն՝ ժամկետը երկարաձգվում էր հաջորդ աշխատանքային օրը, դա չէր ազդում *dies ad quem*-ի որոշման վրա: Հիմնվելով Դատարանի հայտնի նախադեպային իրավունքի վրա՝ վեցամսյա ժամկետը որոշելիս օգտագործվում են Կոնվենցիայի առանձնահատուկ չափանիշները: Ավելին, սույն գործով որևէ նշում չկա, որ դիմումատուն, ով ներկայացվում էր իրավաբանի կողմից, որը պետք է տեղյակ լիներ այս հարցի կապակցությամբ Դատարանի նախադեպային իրավունքի վերաբերյալ, չէր կարող կանխատեսել, որ *dies ad quem*-ը կհամընկնի ոչ աշխատանքային օրվա հետ և գործել է այդ փաստի վերաբերյալ իր տեղեկացված

չլինելուն համապատասխան: Հետևաբար, քանի որ սույն գանգատը ներկայացվել է հոդված 35 § 1-ի իմաստով ներպետական վերջնական որոշման հանձնումից ավելի քան վեց ամսի անց, Դատարանը չէր կարող ուսումնասիրել գործի հանգամանքները:

*Եզրակացություն.* նախնական առարկությունն ընդունվել է ( գանգատը ժամկետնանց է ):

#### ՀՈԴՎԱԾ 46

##### Պիլոտային վճիռ

##### Ընդհանուր բնույթի միջոցառումներ

Պատասխանող Պետությունից պահանջվել է մշակել փոխհատուցման ծրագիր ռեգիստրից հանված անձանց համաչափ փոխհատուցումն ապահովելու նպատակով

##### *Kurić and Others v. Slovenia [GC]*

Գանգատ թիվ 26828/06

Վճիռ 26.6.2012 [ՄԴ]

(Տե՛ս վերևում հոդված 8-ը, էջ 10)

#### ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ

#### ՀՈԴՎԱԾ

**Գույքի օգտագործման**

**վերահսկողություն**

**Բարոյական**

**հիմքերով**

**որսորդությանը հակադրվող հողի սեփականատիրոջ**

**պարտականությունը որսորդություն հանդուրժել իր հողի վրա և միանալ որսորդական միավորմանը**

##### *Herrmann v. Germany [GC]*

Գանգատ թիվ 9300/07

Վճիռ 26.6.2012 [ՄԴ]

**Փաստերը:** Դիմումատուն Գերմանիայում երկու հողակտրոնների սեփականատեր է: Դաշնային որսորդության մասին օրենքի համաձայն նա հետևաբար ինքնըստինքյան որսորդության միավորման անդամ է և պարտավոր է հանդուրժել որսորդությունը իր հողի վրա: Քանի որ նա բարոյական հիմքերից ելնելով դեմ է որսորդությանը, նա դիմեց որսորդության իրավասու մարմիններին՝ պահանջելով դադարացնել իր անդամությունը որսորդական միությանը: Պահանջը մերժվեց: Նմանատիպ պահանջը հետագայում մերժվեց նաև վարչական դատարանի կողմից: 2006թ. դեկտեմբերին դաշնային սահմանադրական դատարանը մերժեց ընդունել դիմումատուի սահմանադրական բողոքը՝ դատական կարգով լուծում տալու վերաբերյալ, մասնավորապես գտնելով, որ հարցը կարգավորող օրենսդրությունը իրավական նպատակներ է հետապնդում և հողի սեփականատերերի վրա չափազանց մեծ բեռ չի դնում: Դատարանը այն կարծիքին էր, որ վիճարկվող դրույթները նպատակ էին հետապնդում պահել որսը գյուղական միջավայրին հարմարեցված ձևով և ապահովել անվտանգ և բազմազան կենդանական աշխարհը, և որ որսորդական միավորմանը հարկադիր անդամությունը համապատասխան և անհրաժեշտ միջոց է եղել այդ նպատակներին հասնելու համար և այն չի խախտում դիմումատուի սեփականության իրավունքը կամ իր համոզմունքների



ազատության իրավունքը կամ միավորման  
ազատության իրավունքը:  
Սահմանադրական դատարանը  
ավելացրեց, որ քանի դեռ քննարկման  
առարկա օրենսդրությունը պարտադիր էր  
հողի բոլոր սեփականատերերի համար,  
դիմումատուի միանման վերաբերմունքի  
իրավունքը ևս չի խախտվել:

2011թ. հունվարի 20-ի վճռում (տե՛ս  
նախադեպային տեղեկատու թիվ 137)  
Դատարանի Պալատը չորս ծայնն ընդդեմ  
երեքի գտավ, որ թիվ 1 Արձանագրության  
1-ին հոդվածի խախտում չի եղել, քանի որ  
Կառավարությունը արդարացի  
հավասարակշռություն է ապահովում  
սեփականության իրավունքի  
պաշտպանության և ընդհանուր շահի  
պահանջների միջև:

**Թիվ 1 Արձանագրության հոդված 1-ի  
ենթադրյալ խախտումը:** Իր հողի վրա  
որսորդությունն հանդուրժելու  
դիմումատուի պարտականությունը  
միջամտում է իր սեփականության  
իրավունքից խաղաղ օգտվելու  
իրավունքին: Գերմանական որսորդական  
օրենսդրությունը, պետք է նշել, որ  
ձևավորում է սեփականության  
օգտագործման նկատմամբ  
վերահսկողության միջոցները համաձայն  
ընդհանուր շահի թիվ 1 Արձանագրության  
հոդված 1-ի իմաստով:

*Չասագնոն և այլոք ընդդեմ Ֆրանսիայի և  
Շնեյդեռն ընդդեմ Լյուքսեմբուրգի<sup>2</sup>*

<sup>2</sup> Չասագնոն և այլոք ընդդեմ Ֆրանսիայի [ՄՊ], թիվ  
25088/94, 28331/95 7 28443/95, 29 ապրիլի 1999,  
նախադեպային տեղեկատու թիվ 5, Շնեյդեռն ընդդեմ  
Լյուքսեմբուրգի, թիվ 2113/04, 10 հուլիսի 2007:

գործերով Դատարանը գտավ, որ  
բարոյական հիմքերով որսորդությունը  
մերժող հողի սեփականատիրոջ վրա  
դրված պարտականությունը՝ հանդուրժել  
իր սեփականության վրա որսորդությունը,  
հակված է խախտել սեփականության  
իրավունքի պաշտպանության և  
ընդհանուր շահի պահանջների միջև  
արդարացի հավասարակշռումը և նշված  
անձանց վրա անհամաչափ բեռ դնել: Այս  
երկու վճիռների ընդունումից սկսած  
եվրոպական մի քանի պետություններ  
փոփոխություններ կատարեցին իրենց  
օրենսդրություններում կամ  
նախադեպային իրավունքում, որպեսզի  
հողի սեփականատերերին  
հնարավորություն տրվի առարկել իրենց  
հողում որսորդության իրականացմանը  
կամ նման պայմաններում դադարացնել  
իրենց անդամությունը որսորդական  
միավորմանը: Հետևաբար պետք է  
պարզել, թե սույն գործով կիրառված  
Դաշնային որսորդության մասին օրենքի  
դրույթներից առաջացած իրավիճակը  
արդյոք փաստական կամ իրավական  
կարգավիճակով էականորեն տարբերվում  
է վերոնշյալ գործերից: Այդ օրենսդրության  
նպատակների վերաբերյալ Դատարանը  
նշեց, որ գերմանական Դաշնային  
որսորդության մասին օրենքի  
նպատակները ներառում են որսի  
պաշարների կառավարումը, որը իր  
հերթին, նպատակ ունի պահպանել որսի  
բազրազանությունը և անվտանգությունը:  
Այս կապակցությամբ, այն էականորեն  
տարբեր չէ Ֆրանսիայի և Լյուքսեմբուրգի  
նախկին օրենքներից, որոնք նմանատիպ  
նպատակներ էին հետապնդում: Թեև  
գերմանական օրենսդրությունը որոշակի  
պարտականություններ էր սահմանում  
որսորդության մեջ ներգրավված անձանց  
վերաբերյալ, փաստ էր, որ հիմնականում

որսորդությունը իրականացվում էր անհատների կողմից որպես ազատ ժամանակի զբաղումը, ինչպես Ֆրանսիայի և Լյուքսեմբուրգի դեպքում էր: Ինչ վերաբերում է օրենքի գործողության տարածքային սահմաններին և որսորդական միավորմանը հարկադիր անդամությունից ազատվելու հնարավորությանը, գերմանական որսորդական օրենսդրությունը համազգային կիրառություն ուներ, մինչդեռ ֆրանսիական օրենքը կիրառելի էր միայն որոշակի տարածքային ստորաբաժանումներում: Այնուամենայնիվ գերմանական Երկիրը դաշնային օրենսդրությունից անջատ կարող էր որսորդության մասին օրենքներ ընդունել, թեև մինչև այժմ այդպես չի վարվել: Ավելին, բոլոր երեք օրենքները նախատեսում էին կամ նախատեսել էին նմանատիպ տարածքային բացառություններ՝ ընդգրկված տարածքների, բնության պաշարների և որսի պաշարների համար: Օրենքների միջև որոշակի տարբերությունները, ինչպիսին օրինակ գերմանական օրենքի տարբերակված վերաբերմունքն էր կապված հողակտորի չափերի հետ, չէին կարող վճռորոշ համարվել: Ինչ վերաբերում է որսորդության համար իրենց հողերը օգտագործվող սեփականատերերի փոխհատուցման տրամադրմանը, Գերմանիայի և Լյուքսեմբուրգի օրենսդրությունը, ի տարբերություն Ֆրանսիայի օրենսդրության, միավորման անդամների համար հնարավորություն էր նախատեսում որսորդական իրավունքի լիզինգից համաչափ շահաբաժիններ ստանալ: Գերմանիայում փոխհատուցում էր տրամադրվում միայն երբ ուղղակիորեն

պահանջ էր ներկայացվում: Դատարանը գտնում է, որ դա չի համապատասխանում բարոյական առարկման նկատմամբ հարգանքի հասկացությանը՝ պահանջելով առարկողից իշխանություններին դիմել փոխհատուցման համար, որը ըստ էության կազմում է իր առարկության հիմքը: Ամեն դեպքում, գերմանական դաշնային որսորդության մասին օրենքը որևէ հնարավորություն չի թողել հողատերերի բարոյական համոզմունքների համար, որպեսզի հաշվի առնվի որսորդության անընդունելիությունը:

Այս քննարկումների լույսի ներքո Գերմանիայում առաջին անգամ հանդիպած իրավիճակը էականորեն տարբեր չէ Դատարանի կողմից քննված *Չասագնոն և այլոքի և Շնեյդեռնի* գործերից: Հետևաբար, Դատարանը պատճառ չտեսավ այս գործերով իր եզրահանգումներից տարանջատելու համար, մասնավորապես, որ իր սեփականության վրա որսորդությունը հանդուրժելու պարտականությունը, բարոյական պատճառներից ելնելով, որսորդությանը դեմ հողի սեփականատիրոջ վրա անհամաչափ բեռ է դնում:

*Եզրակացություն՝* խախտում (տասչորս ծայնն ընդդեմ երեքի)

Հոդված 41՝ 5,000 եվրո փոխհատուցում ոչ նյութական վնասների համար:

**Հողի վարձակալության ուժով  
վարձակալի օրինական իրավունքը՝  
պահանջելու վարձակալության**

**Երկարաձգում նախնական  
պայմաններով անորոշ ժամկետով՝  
խախտումն առկա է**

***Lindheim and Others v. Norway***

Գանգատ թիվ 13221/08 և 2139/10

Վճիռ 12.6.2012 [Բաժանմունք IV]

**Փաստերը:** Հետպատերազմյա շրջանում Նորվեգիայում անշարժ գույքի ձեռքբերման համար սահմանափակ միջոցները առաջացրեցին այսպես կոչված հողի վարձակալության կարգավորումներ, որոնք գրավիչ դարձան տուն ունենալ ցանկացող անձանց համար: Հողատերերի համար նման կարգավորումները իրենց հողից առանց ներդրում կատարելու կայուն եկամուտ ստանալու միջոցներ էին առաջարկում և վաճառքի գրավիչ այլընտրանք չափավոր գնի սահմաններում: 300,000-ից 350,000 մի քանի հողի վարձակալության պայմանագրեր կնքվեցին, մեծամասամբ սեփական տների համար: 1980-ականներին անշարժ գույքի գների աճից հետո օրենսդիրը անհրաժեշտ համարեց միջամտել վարձակալների շահերը պաշտպանելու համար, ովքեր ներդրում էին կատարում իրենց բնակարանների համար, բայց հնարավորություն չունեին ձեռք բերելու հողակտորը (վարձը մարելու հետ միասին): 1996թ. հողի վարձակալության մասին օրենքի 33-րդ բաժնի հիման վրա, 2004թ. փոփոխություններով, յուրաքանչյուրը, ով երկար ժամանակով վարձակալում է հողը մշտապես կամ որպես հանգստյան տուն, իրավունք ունի պայմանագրային ժամկետի ավարտին պահանջելու վարձակալության ժամկետի երկարացում

վարձակալության պայմանագրի բնօրինակով նախատեսված նույն պայմաններով և առանց ժամկետի սահմանափակման: Վարձավճարի չափը կարող էր աճել միայն ընդհանուր ինֆլյացիայի հետ միաժամանակ, բայց ոչ հողի գների աճի հետ: 2007թ. սեպտեմբերի 21-ի նախադեպային վճռով Գերագույն դատարանը գտավ, որ 33-րդ բաժնի փոփոխությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Դիմումատուները ունեին հողակտորներ, որոնք 1976թ. առաջ հողի վարձակալության պայմանագրերով էին ծանրաբեռնված՝ մշտական կամ հանգստյան տների համար 40-ից 99-ը տարվա ժամանակահատվածով: Եվրոպական դատարանին հասցեագրված իրենց դիմումում նրանք բողոքում էին, որ փոփոխված օրենսդրության հիման վրա, իրենց վարձակալները հնարավորություն ունեին պահանջելու երկարաձգել վարձակալության պայմանագրերը անորոշ ժամկետով և նույն պայմաններով, ինչպիսիք նախկինում էին:

**Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի ենթադրյալ խախտումը:**

Հողի վարձակալության մասին օրենքի փոփոխված 33-րդ բաժնից բխող միջամտությունը՝ դիմումատուի սեփականությանը, օրինական էր և թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի նպատակներից ելնելով իրենից ներկայացնում էր վերահսկողություն գույքի օգտագործման նմատմամբ: Նորվեգիայի խորհրդարանի կարծիքով առկա էր իրավական անհրաժեշտություն, հասարակական քաղաքականության հիմքերով, պաշտպանելու համար այն

վարձակալների շահերը, ովքեր ֆինանսապես հնարավորություն չունեն իրականացնելու հետգնման իրենց օրինական իրավունքները, որը ակնհայտ չհիմնավորված չէր: Հետևաբար միջամտությունը կարող է համարվել ընդհանուր շահին համապատասխան:

Համաչափության սահմաններին անդրադառնալով, Դատարանը նշեց, որ նորվեգական խորհրդարանը դուրս էր եկել հատկապես դժվար խնդրի հետ՝ փորձելով կարգավորել հակասող շահերը, որը ըստ էության ակնհայտ դժվար է. մի կողմից վարձատուի շահն է՝ շուկայական արժեքից փոփոխվող բանակցային վարձավճարով, մյուս կողմից՝ վարձակալի շահերն են՝ մինչև ժամկետի ավարտը վարձակալության շարունակությամբ հողի վրա գտնվող կառույցի վրա կատարված ֆինանսական ներդրման հիման վրա: Նորվեգիայում հողի վարձակալության պայմանագրի մեծ քանակությամբ (300,000 գերազանցող) պայմանավորված, հասկանալի է, որ օրենսդրական գործընթացը պետք է ընդգծեր մաքուր և կանխատեսելի լուծման անհրաժեշտությունը և խուսափեր հնարավոր ծախսատար և ժամանակատար զանգվածային դատավարություններից:

Այնուամենայնիվ, Դատարանը բավարարված չէ, որ Պատասխանատու պետությունը, հաշվի չառնելով թույլատրելի հայեցողության լայն շրջանակը, հասարակության ընդհանուր շահի և դիմումատուների սեփականության իրավունքի միջև վերացրել է արդարացի հավասարակշռությունը: Այս կապակցությամբ նշվել է, որ որևէ հատուկ գնահատում չի կատարվել, արդյո՞ք 33-րդ

բաժնի փոփոխությունը վարձակալների և վարձատուների միջև կարողացել է հասնել հավասարակշռման. դիմումատուների ստացած վարձավճարի չափը զարմանալիորեն ցածր է (ավելի ցածր, քան հողերի շուկայական արժեքի 0,25%-ը). Օրենսդրությունը, փաստորեն, անցնում է հնարավոր ֆինանսական դժվարությունների և սոցիալական արդարության վրայով, և որպես կանոն, կիրառվում է, երբ էլ որ հասնում է վարձակալության նորացման ժամանակը՝ անկախ վարձակալների ֆինանսական միջոցներից. երկարաձգումը անորոշ ժամակով է և վարձավճարի չափը կարող է աճել սպառողների գների ինդեքսի լույսի ներքո, և ոչ թե՛ հողի արժեքից ելնելով. ի վերջո, միայն վարձակալը կարող է որոշել դադարացնել վարձակալության համաձայնագիրը պայմանագիրը խզելու կամ հողակտորը գրավից ազատելու միջոցով (ցանկալի պայմաններով ձեռք բերել): Անհամաչափ պարտավորությունը, փաստորեն, դրվել էր դիմող վարձատուների վրա:

*Եզրակացություն՝* խախտումն առկա է (միաձայն)

Հոդված 46: Պատասխանատու պետությունից, Կոնվենցիայի ներքո սեփականության իրավունքի պաշտպանության սկզբունքին համաձայն և Դատարանի կողմից իր վճռում հայտաբերված թերությունները հաշվի առնելով, պահանջվել է ընդունել համապատասխան օրենսդրություն և/կամ ընդհանուր միջոցառումներ ձեռնարկել, իր ներպետական իրավական համակարգում այնպիսի մեխանիզմ ապահովելու համար, որը կկարողանար վարձատուների և

հասարակության ընդհանուր շահերի միջև  
արդարացի համաչափություն  
երաշխավորել:

Հոդված 41: Դատարանը մերժեց ոչ  
զարգացած հողատարածքի համար  
շուկայական գնին հավասար  
դիմումատուի փոխհատուցման պահանջը՝  
Հողի վարձակալության մասին օրենքի  
ներքո վճարվելիք վարձավճարի  
կապիտալացված արժեքից ավելի  
պակաս: Դա հաշվի առնելով, գործի  
յուրահատուկ հանգամանքներից ելնելով,  
նկատի ունենալով խնդրի դժվարությունը,  
որին նորվեգական խորհրդարանը  
բախվել էր, օրենսդրական և/կամ այլ  
ընդհանուր միջոցառումների և  
Կոնվենցիայի իրավունքին բնորոշ  
իրավական որոշակիության սկզբունքի  
վերաբերյալ Դատարանի ցուցումի  
առնչությամբ, պետությունը սույն վճռին  
նախորդած իրավական ակտերի կամ  
իրավիճակների կապակցությամբ պետք է  
ազատվի պարտավորություններից:  
Այնուամենայնիվ, դիմումատուներին  
փոխհատուցում էր տրամադրվել այն  
ծախսերի համար, որ նրանք պետք է  
վճարեին հակառակորդ կողմերին  
ներպետական դատավարությունում:

### **ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 3-ՐԴ**

#### **ՀՈԴՎԱԾ**

**Ժողովրդի կարծիքի ազատ  
արտահայտում  
Օրենսդիր մարմնի ընտրությունը  
ԶԼՄ-ների կողմից  
խորհրդարանական  
ընտրությունների կողմնակալ  
լուսաբանման մասին պնդումը.  
խախտումն առկա է**

### **Communist Party of Russia and Others v. Russia**

Գանգատ թիվ 29400/05

Վճիռ 19.6.2012 [Բաժանմունք I]

**Փաստերը:** Դիմումատուները երկու  
ռուսական քաղաքական  
կուսակցություններ են՝ Ռուսաստանի  
Դաշնության կոմունիստական  
կուսակցությունը և Ռուսական  
դեմոկրատական կուսակցությունը  
<Yabloko> և Ռուսաստանի վեց  
քաղաքացիներ: 2003թ. դեկտեմբերին  
Պետական դոմայի անդամների  
ընտրության ժամանակ նրանք բոլորը  
հանդես եկան որպես ընդդիմադիր  
կուսակցություններ և թեկնածուներ:  
Իշխանամետ ուժերը հիմնականում  
ներկայացվել են Միասնական  
Ռուսաստան կուսակցության կողմից, որը  
ստացել է ձայների մեծամասնությունը  
(ավելի քան 37%) և խորհրդարանում  
ձևավորել է ամենամեծ խմբավորումը 224  
տեղով: Կոմունիստական կուսակցությունը  
ստացել է ձայների 12,6% և ստացել 52  
տեղ և հետևաբար, Դոմայում ձևավորել է  
երկրորդ մեծ խմբավորումը: Yabloko-ն  
ստացել է ձայների 4,3%-ը: Քանի որ սա  
սահմանված 5% նվազագույն շեմից  
պակաս էր, այն խորհրդարանում որևէ  
տեղ չստացավ: Վեց անհատ  
դիմումատուներից միայն մեկն է ընտրվել  
որպես խորհրդարանի անդամ: Ազգային  
հինգ հիմնական հեռարձակող  
ընկերություններ լուսաբանել են  
ընտրությունները: Դրանցից երեքը  
ուղղակիորեն վերահսկվում են պետության  
կողմից և պետության հետ  
փոխհամագործակցող կորպորացիաները

մյուս երկու ընկերությունների հիմնական բաժնետերերն էին: Նախընտրական քարոզչության ժամանակ պետական յուրաքանչյուր հեռարձակող ընկերությունից պահանջվել է մրցող թեկնածու կուսակցություններին իրենց կողմից վերահսկվող յուրաքանչյուր հեռուստատեսային կամ ռադիո ալիքով յուրաքանչյուր աշխատանքային օր տրամադրել մեկ անվճար եթերաժամ: Ի հավելում, կուսակցությունները և թեկնածուները կարող էին գնել որոշակի չափով վճարովի եթերաժամ՝ մյուսների հետ հավասար հիմքերով քարոզարշավին մասնակցելու համար: Բացի «քարոզարշավին մասնակցելուց» բոլոր ալիքները ներգրավված էին տարբեր լուրերով ընտրությունների մասին զեկուցմանը: Դիմումատուները նշեցին, որ զանգվածային լրատվամիջոցների լուսաբանումները արդար չէին, որովհետև հինգ հիմնական հեռուստալիքները, փաստորեն, քարոզարշավ էին անցկացնում գործող կուսակցության համար, որ եթերաժամերը հավասար չէին տրամադրվում և տարածվող տեղեկատվությունը չեզոք չէր: Ընտրություններին հետևող շատ դիտորդներ նկատեցին, որ հեռուստատեսային լուսաբանումը ընդդիմության համար անբարենպաստ էր: Դիմումատուները այս պնդման կապակցությամբ տարբեր հիմքերով դիմումների շարք են ներկայացրել վարչական մարմիններին և դատարաններ, սակայն անարդյունք:

### **Հոդված 13-ի ենթադրյալ խախտումը:**

Դիմումատուները բողոքում են ոչ թե անօրինական քարոզարշավի անցկացման առանձին մեկ կամ մի քանի դեմքերի մասին, այլ՝ ամբողջ երեք ամսվա

ընթացքում հինգ հեռարձակող ընկերությունների ողջ զանգվածային լրատվության քաղաքականության մասին: Նրանք փորձում էին արդյունքում ընտրությունները անվավեր ճանաչել: Գերագույն դատարանը իրավասություն ուներ անվավեր ճանաչել ընտրությունները, եթե հայտնաբերեր ընտրական օրենքի լուրջ խախտումներ, ներառյալ անօրինական քարոզարշավի անցկացման պնդումը: Այնուամենայնիվ, դիմումատուները, համենայն դեպս տեսականորեն, իրենց պահանջը բավարարող իրավական պաշտպանության միջոցի մատչելիության հնարավորություն են ունեցել: Նրանց պնդումները ուսումնասիրվել են Ռուսաստանի Գերագույն դատարանի իրավասության երկու մակարդակներում ընտրական գործերով բարձրագույն դատական մարմնում, որը գործի կապակցությամբ լրիվ իրավասություն ուներ և իրավասություն ուներ *inter alia* անվավեր ճանաչել ընտրության արդյունքները: Գերագույն դատարանի անկախության հարցը որպես այդպիսին չի քննարկվել: Ավելին, Գերագույն դատարանի առաջ դատավարության ժամանակ ոչ մի լուրջ թերություն չի հայտնաբերվել, որը պաշտպանության այդ միջոցը անադրյունավետ կդարձներ: Դիմումատուները լավ պատրաստված էին լուսնների համար, իրենց պահանջի առնչությամբ հավաքել և ներկայացրել էին բազմակողմանի նյութեր և հնարավորություն ունեին կատարելու գրավոր և բանավոր երկար հայտարարություններ: Դիմումատուի կողմից ներկայացված նյութերի ուսումնասիրության համար Գերագույն դատարանի կողմից ընտրված մեթոդը կամայական չէր կամ ակնհայտ անհիմն:

Մասնավորապես, Գերագույն դատարանը ուսումնասիրել է տասնչորս օրվա համար հինգ հեռուստաալիքների ծայնագրությունները և կայացրել է հիմնավորված որոշում: Այսպիսով, Գերագույն դատարանում դատաքննության ժամանակ տրամադրվել են 13-րդ հոդվածով սահմանված հիմնական երաշխիքները: Ռուսական օրենքը դիմումատուներին տրամադրել է պաշտպանության իրավական մեխանիզմ, որը հնարավորություն էր տալիս հղել իրենց բողոքները համաձայն թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածի:

*Եզրակացություն՝* խախտումն առկա չէ (միաձայն)

Թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդված: Որպես սկզբունքի հարց Դատարանը իրավասու է ուսումնասիրել զանգվածային լրատվամիջոցների ենթադրյալ անհավասար լուսաբանման մասին բողոքը՝ թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածի ներքո: Ինչ վերաբերում է Կառավարության կողմից զանգվածային լրատվամիջոցների ենթադրյալ մանիպուլյացիային, թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածի ներքո նախկին գործերով Դատարանը ստիպված էր ուսումնասիրել յուրահատուկ օրենսդրական դրույթները կամ հայտնի վարչական միջոցները: Սույն գործով դիմումատուները բողոքում էին, որ ազգային հինգ ալիքների *de jure* չեզոքությունը *de facto* չի եղել: Այնուամենայնիվ Դատարանը նշեց, որ գերագույն դատարանը չի գտել, որ զանգվածային լրատվամիջոցների լուսաբանումը բոլոր հարաբերություններում հավասար է եղել,

բայց ըստ էության գտավ, որ որևէ քաղաքական մանիպուլյացիայի ապացույց չի ներկայացվել, և զանգվածային լրատվամիջոցների լուսաբանման և ընտրությունների արդյունքների միջև որևէ պատճառական կապ չի ցուցադրվել: SPS քաղաքական կուսակցությունը, որը ընդհանուր առմամբ ստացել է զանգվածային լրատվամիջոցների լուսաբանման մեծամասնությունը, չի անցել նույնիսկ ընտրական անցողիկ նվազագույն շեմը, մինչդեռ Ռոդինա քաղաքական բլոկը, չնայած զանգվածային լրատվամիջոցների սուղ մեկնաբանմանը, ստացել է ավելի լավ արդյունքներ: Հետևաբար, այս մասով Գերագույն դատարանի փաստարկները չեն համարվում կամայական կամ ակնհայտ անհիմն: Ավելին, դիմումատուները, հեռուստատեսային ընկերությունների կապիտալում կամ կառավարման կապակցությամբ, Կառավարության կողմից իրենց գերակայող դիրքի չարաշահման որևէ ուղղակի ապացույց չեն ներկայացրել: Եվ ոչ էլ բավարար չափով բացատրել են, թե ինչպես է հնարավոր հասանելի ապացույցների և տեղեկատվության հիման վրա և լրագրողների կողմից իրենց նկատմամբ չափազանց մեծ ճնշման մասին բողոքի բացակայության պայմաններում, տարանջատել Կառավարության կողմից դրված քարոզչությունը և իսկական քաղաքական լրագրությունը և/կամ պետական պաշտոնյանների գործունեության հաշվետվության ընդհանուր կարգը: Այստեղից հետևում է, որ դիմումատուների պնդումը, որ Կառավարության կողմից չարաշահումներ են եղել, բավարար չափով ապացուցված չէ:

Հետևաբար հաջորդ հարցն է, արդյոք պետությունը թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածի ներքո ունի որևէ դրական պարտավորություն երաշխավորելու համար, որ պետության կողմից վերահսկվող զանգվածային լրատվամիջոցներ կողմից լուսաբանումները համաչափ լինեն և համապատասխանեն «ազատ ընտրությունների» ոգուն, որտեղ նույնիսկ դիտավորյալ մանիպուլացիայի ուղղակի ապացույցներ չեն հայտնաբերվել: Սույն գործով տեղ գտած ընտրական բողոքարկման համակարգը բավարար էր պետության դատավարական բնույթի դրական պարտավորություններին համապատասխանելու համար: Անդրադառնալով գլխավոր հայեցակարգին, պետությունը միջամտելու պարտավորություն ուներ՝ ԶԼՄ-ների տարբեր տեսակետների հնարավորություններ ստեղծելու համար: Դիմումատուները ազգային հեռուստաալիքների մատչելիության որոշ միջոցառումներից օգտվել են, քանի որ իրենց տրամադրվել է անվճար և վճարովի եթերաժամեր՝ առանց տարբեր քաղաքական ուժերի միջև տարբերություն դնելու: Ընդդիմության թեկնածուներին տրամադրված եթերաժամերի քանակությունը աննշան չէր: Նմանատիպ դրույթներ են կարգավորում կուսակցությունների և թեկնածուների համար տարածքային հեռուստատեսության և այլ զանգվածային լրատվամիջոցների մատչելիության հարցը: Դեռ ավելին, ընդդիմադիր կուսակցությունը և թեկնածուները ի վիճակի էին իրենց քաղաքական հաղորդագրությունը փոխանցելու ընտրազանգվածին իրենց կողմից վերահսկվող զանգվածային

լրատվամիջոցների կողմից: Կարգավորումը, որը առկա էր 2003թ. ընտրությունների ժամանակ, ընդդիմադիր կուսակցության և թեկնածուների համար ապահովել է համեմայնդեպս նվազագույն տեսանելիություն հեռուստատեսությամբ: Ինչ վերաբերում է այն պնդմանը, որ պետությունը պետք է երաշխավորեր տեսալսողական լրատվամիջոցների չեզոքությունը, դիմումատուների այս պահանջները բավարար հիմնավորված չէին: Որոշակի քայլեր էին ձեռնարկվել ռուսական հեռուստատեսությամբ ընդդիմադիր կուսակցությունների և թեկնածուների որոշակի տեսանելիությունն երաշխավորելու, և ԶԼՄ-ների հրատարակչական անկախությունն և չեզոքությունն ապահովելու նպատակով: Հավանաբար այս միջոցները չէին ապահովել *de facto* հավասարությունը: Այնուամենայնիվ, Դատարանին ներկայացված 2003թ-ի ընտրությունների հատուկ հանգամանքների լույսի ներքո գնահատելիս, և Թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածի ներքո պետությունների կողմից կիրառվող թույլատրելի հայեցողության շրջանակը հաշվի առնելով հաստատված չի կարող համարվել այն, որ պետությունը չէր կատարել իր դրական պարտավորությունները այս ոլորտում այն չափով, որ դիտարկվեր այդ դրույթի խախտում:

*Եզրակացություն՝* խախտումն առկա չէ (միաձայն):

## ԹԻՎ 7 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ՀՈՂՎԱԾ

### Փոխհատուցում





**Դատական սխալի զոհի  
անհնարինությունը ոչ նյութական  
վնասի կապակցությամբ  
փոխհատուցում պահանջելու՝  
խախտումն առկա չէ**

***Poghosyan and Baghdasaryan v.  
Armenia***

Գանգատ թիվ 22999/06

Վճիռ 26.6.2012 [Բաժանմունք III]

**Փաստերը:** 1999թ. առաջին դիմումատուն սպանության և բռնաբարության համար մեղավոր ճանաչվեց և դատապարտվեց տասնհինգ տարվա ազատազրկման: Այնուամենայնիվ, նա շարունակեց պայքարել իր անմեղության համար և 2004թ. նրա դատապարտումը վերացվեց և նա ազատ արձակվեց բանտից: Երեք ոստիկաններից երկուսը, ովքեր իրականացրել էին սպանության նախնական քննությունը, արդյունքում մեղադրվեցին իրենց լիազորությունների չարաշահման համար, երբ տարածքային դատարանը գտավ, որ նրանք վատ վերաբերմունք էին դրսևորել առաջին դիմումատուի նկատմամբ խոստովանություն ստանալու համար: Առանձին քաղաքացիական դատավարությունների միջոցով առաջին դիմումատուն փոխհատուցում ստացավ բաց թողնված եկամուտների համար, սակայն ոչ նյութական վնասի մասին նրա պահանջը մերժվեց այն հիմքով, որ նման տեսակի վնասները չեն հատուցվում քաղաքացիական օրենսդրությամբ:

**: Կոնվենցիայի 3-րդ և 13-րդ հոդվածների ենթադրյալ խախտումը:** Կոնվենցիայի այլ հոդվածի իրական

խախտման առկայությունը չի կանխորոշում հոդված 13-ի կիրառումը: Այդ դրույթի կիրառման համար այն ամենը ինչ պահանջվում է, դա Կոնվենցիայով սահմանված ժամկետներում վիճելի բողոքն է: Առաջին դիմումատուն անկասկած ուներ նման բողոք, քանի որ ներպետական դատարանները միանշանակ հայտարարել են, որ առաջին դիմումատուի նկատմամբ ոստիկանները վատ վերաբերմունք էին դրսևորել: Հետևաբար հոդված 13 կիրառելի է, չնայած այն հանգամանքին, որ Դատարանը չի կարող ուսումնասիրել 3-րդ հոդվածի ներքո դիմումատուի հիմնական բողոքը, քանի որ նրա նկատմամբ վատ վերաբերմունքը տեղի է ունեցել Հայաստանի համար Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց առաջ: Նախկին գործերով Դատարանը գտել է, որ ոչ նյութական վնասի փոխհատուցումը սկզբունքորեն պետք է հասանելի լինի 2-րդ և 3-րդ հոդվածների, Կոնվենցիայի ամենահիմնարար դրույթների խախտման համար, որպես հնարավոր պաշտպանության միջոցների ծավալի մի մաս: Քանի որ նման փոխհատուցում ներպետական օրենքով առաջին դիմումատուին հասանելի չի եղել, նա զրկված է եղել արդյունավետ պաշտպանության միջոցից:

*Եզրակացություն՝* խախտումն առկա է (միաձայն)

Հոդված 3 թիվ 7 Արձանագրության: Քանի որ առաջին դիմումատուի դատապարտման վերացումը և փոխհատուցման համար դիմելը տեղի են ունեցել Հայաստանի համար թիվ 7 Արձանագրության ուժի մեջ մտնելու հետո, Դատարանը այս բողոքի կապակցությամբ

ժամանակավոր իրավասություն ունի թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածը այս պարագայում կիրառելի է: Մինչդեռ այդ դրույթը երաշխավորում է փոխհատուցման վճարումը համաձայն պետության օրենքին կամ պրակտիկային, փոխհատուցումը միևնույն է ենթակա է վճարման, որտեղ ներպետական օրենքը կամ սովորույթը նման դրույթ չեն նախատեսում: Ավելին, թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածի նպատակը մեծամասամբ սխալ դատապարտման համար նյութական կորուստների վերականգնումը չէ, այլև դատական սխալի արդյուքում մեղադրված անձի համար ապահովում է ցանկացած ոչ նյութական վնասի փոխհատուցում, ինչպիսին է դժբախտությունը, վախը, անհարմարությունը և կյանքը վայելելու ցանկության կորուստը: Նման որևէ փոխհատուցում առաջին դիմումատուին հասանելի չի եղել:

Եզրակացություն՝ խախտումն առկա է (միաձայն):

Հոդված 41՝ 30,000 եվրո փոխհատուցում առաջին դիմումատուին ոչ նյութական վնասի համար:

**ԳՈՐԾԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ՄԵԾ  
ՊԱԼԱՏԻՆ  
Հոդված 43 § 2**

Հետևյալ գործերը Մեծ Պալատին են հանձնվել համաձայն Կոնվենցիայի 43§2 հոդվածի:

*X v. Latvia*

Գանգատ թիվ 27853/09  
Վճիռ 13.12.2011 [Բաժանմունք III]

(Տե՛ս վերևում հոդված 8, էջ 12)

**ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ԶԻՋՈՒՄԸ ՄԵԾ  
ՊԱԼԱՏԻՆ  
Հոդված 30**

*X and Others v. Austria*

Գանգատ թիվ 19010/07  
[Բաժանմունք I]

(Տե՛ս վերևում հոդված 14, էջ 17)

**ԴԱՏԱՐԱՆԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Ընտրություններ**

2012թ. հունիսի 25-ից 29-ը տեղի ունեցած ամառային նստաշրջանի ընթացքում Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը Դատարանի հինգ նոր դատավոր է ընտրել. Ales Pejchal Չեխիայի հանրապետության կողմից, Johannes Silvis Նիդեռլանդներից, Krzysztof Wojtyczek Լեհաստանից, Helena Jaderblom Շվեդիայից և Paul Mahoney Միացյալ Թագավորությանից: Բացառությամբ դատավոր Jaderblom-ի, ով իր պաշտոնավարումը կսկսի 2012թ. հունիսի 26-ից հետո երեք ամսվա ընթացքում, նորընտիր դատավորները կպաշտոնավարեն 2012թ. նոյեմբերի 1-ից:

Դատարանը ընտրել է նոր փոխնախագահ՝ Dean Spielmann (Լյուքսեմբուրգ) և Բաժանմունքի նոր նախագահ՝ Ineta Ziemele (Լատվիա): Նրանք ընտրվել են երեք տարի ժամկետով և իրենց պարտականությունները կստանձնեն համապատասխանաբար 2012թ. սեպտեմբերի 13-ին:

## **Դատարանի HUDOC նախադեպային իրավունքի բազայի նոր տարբերակը**

HUDOC-ի նոր տարբերակը ֆինանսավորվել է Կիպրոսի, Դանիայի, Գերմանիայի և Նորվեգիայի կառավարությունների կամավոր ներդրումներից, այն կգործարկվի 2012թ. հունիսի 25-ից: Նոր տարբերակը թույլ է տալիս օգտվողներին գտնել նախադեպային իրավունքն ավելի ինտուիտիվ կերպով հեշտ օգտագործման նախատեսված ինտերֆեյսի միջոցով: Այն օգտվողներին առաջարկում է նոր հնարավորություններ, ներառյալ փնտրվող վճիռը հեշտությամբ բացելու հնարավորությունը refiners- միջոցով: Հնարավորություն է ստեղծվել ծանոթանալու առավել նշանակալից գործերի իրավական սեղմագրերին: Լրացուցիչ կարևորության կատեգորիա է ստեղծվել, որը հնարավորություն է տալիս օգտվողներին կենտրոնացնել իրենց որոնումը գործերի վրա, որոնք ընտրվել են վճիռների և որոշումների մասին Դատարանի պաշտոնական զեկույցներում ընդգրկվելու համար: Փաստաթղթերը կարելի է ներբեռնել Word և PDF ձևաչափով, և օգտվողները կարող են ստեղծել իրենց անձնական, առանձին RSS դաշտերը:

Նոր համակարգ մուտք գործելու համար խնդրում ենք սեղմել ստորև նշված հղմանը՝

<http://hudoc.echr.coe.int/sites/eng>

**ԴԱՏԱԿԱՆԻ ՎԵՐՋԻՆ  
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ**

**2012թ**

**դատավորների**

**երկխոսությունը**

Դատավորների միջև երկխոսության հրապարակումների շարքը վերաբերում է Դատարանի դատական տարվա բացում ազդարարող ամենամյա սեմինարներին է: Այս տարի Եվրոպայի շուրջ 200 առաջադեմ դատական գործիչներ քննարկեցին <Ինչպե՞ս կարելի է երաշխավորել ազգային դատարանների առավել մեծ ներգրավվումը Կոնվենցիայի համակարգին> թեման: 2012թ. դատավորների միջև երկխոսության գործընթացը հրապարակվել է CD-Rom ձևաչափով, որը ներառում է հիմնական մասնակիցների զեկույցը, էլեկտրոնային կայքի քննարկումները, ինչպես նաև երկխոսություն բաժնի նախկին խմբագրությունները: Դրանք նաև հասանելի են Դատարանի ինտերնետային կայքում (<[www.echr.coe.int](http://www.echr.coe.int)> - The Court – Events at the Court):

**Ընդունելիության**

**չափանիշների**

**գործնական ձեռնարկ**

Նոր գերմաներեն, էստոներեն, վրացերեն, իտալերեն, լիտվերեն և ռումիներեն ձեռնարկների թարգմանությունները, որոնք թարմացված են 2011թ. դրությամբ, հրապարակվել են Դատարանի ինտերնետային կայքում (<[www.echr.coe.int](http://www.echr.coe.int)> - CaseLaw): Դրանք արտադրվել են Լիխտենշտեյնի, Էստոնիայի, Վրաստանի, Իտալիայի, Լիտվիայի և Մոլդովայի Հանրապետության կառավարությունների հետ համագործակցությամբ կամ նրանց աջակցությամբ:

**Եվրոպական հակադիսկրիմինացիոն  
իրավունքի ձեռնարկ. Նախադեպային  
իրավունքի թարմացում**

Նախադեպային իրավունքի վերջին  
թարմացումը, որը տեղ է գտել  
հակադիսկրիմինացիոն իրավունքի  
ձեռնարկում, վերջերս հրապարակվել է  
անգլերեն տարբերակով: Ֆրանսերեն  
տարբերակն այժմ հրապարկված է  
Դատարանի ինտերնետային կայքում e  
([www.echr.coe.int](http://www.echr.coe.int) – Case-Law).